

10277

Պոլիտարձեր բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ
ՉՈՐՐՈՐԴ ՅԵՎ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՊԼԵՆՈՒՄՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3KCM2

Z-21

ՊԵՏԶՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

38-Կ
Ձ 1955

ՅԿԸՄԶ
Զ - 21

24 SEP 2006

1 DEC 2009

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏՐՈՆԻ
ՉՈՐՐՈՐԴ ՅԵՎ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՊԼԵՆՈՒՄՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ԲԵՂԱԲՍԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

01 JUN 2013

10277

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ IV ՊԼԵՆՈՒՄԻ
 ՎՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԿ. ԿՈՍԱՐԵՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ
 ԱՌԹԻՎ
 ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԺՈՂՈՎՐԴԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ
 ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ



56609-66

ПОСТАНОВЛЕНИЯ
 ЧЕТВЕРТОГО И ПЯТОГО
 ПЛЕНУМОВ ЦК ВЛКСМ
 Армагиз—Издательство полит. литературы
 Ереван ● 1938

ՀԱՄԼԿՅՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԻՎ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆ
ԸՆԿ. ԿՈՍԱՐԵՎԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ՝ ԿՈՍՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ԺՈՂՈՎՐԴԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակներս հայտարարվեցին կոմյերիտմիության մեջ կատարվող թշնամական, քայքայիչ աշխատանքի փաստեր, վորոնք վկայում են, վոր տրոցկիստական-բուխարինական լրտեսները, տեւորիստները, սոցիալիստական հայրենիքի դավաճանները յերկար ժամանակ գործելիս են յեղել ՀամԿՅՅԵՄ-ի կազմակերպություններում:

Տրոցկիստական-բուխարինական ֆաշիստների, լրտեսների բանդան թափանցել էր մի շարք մարդային, յերկրային ու շրջանային կազմակերպությունների ղեկավարության մեջ և նույնիսկ սողակել էր ՀամԿՅՅԵՄ-ի Կենտրոնական կոմիտեն:

Այդ հակահեղափոխական, տրոցկիստական-բուխարինական վոհմակը, վոր կազմվել էր կուսակցության ու կոմյերիտմիության կողմից վաղուց ջախջախված հակակուսակցական հոսանքների ու խմբակների բեկորներից, գլխավորում էին հայրենիքի դավաճաններ՝ ժողովրդի թշնամիներ Սալտանովը, Լուկյանովը, Փայրերգը, Բուբեկինը, Անդրեյեվը և ուրիշները: Հանդիսանալով խորհրդային ժողովրդի վտխերիմ ու գաղաղամ թշնամիները, նրանք իրենց առջև նպատակ էին դրել բանվորների և գյուղացիների պարտությունը, նրանց ստրկացումը և կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության վերականգնումը մեր յերկրում: Տրոցկիստական-բուխարինական թափթիուկներն ուզում էին մեր յերկիրը դարձնել ոտարերկրյա կապիտալիստների գաղութ, ուզում էին կապիտալիստական ստրկության լուծը դնել խորհրդային ազատ ժողովրդի վզին, վերադարձնել գործադրկությունը, սովն ու աղքատությունը: Տրոցկիստական-բուխարինական դավաճաններն ուզում էին կապիտալիստների ձեռքը հանձնել մեր սոցիալիստական ձեռնարկությունները, վերականգնել

աշխատավորները կապիտալիստական շահագործումը: Այդ սրի-
կաներն ուղղում էլին բանվորների և գյուղացիների ազատ աշխա-
տանքը փոխարինել տաժանակիր, ստրկական աշխատանքով:
Նրանք ուղղում էլին վերադարձնել հողը կալվածատերերին ու կու-
լակներին, լիկվիդացիայի յենթարկել կոլտնտեսուհիներին և
դարձնել կոլտնտեսային գյուղը գեպի աղքատութան, իրավազր-
կույթյան ու կուլակային ստրկութան հին ուղին: Նրանք ձգտում
էլին խլել խորհրդային ժողովրդից ու մեր յերիտասարգությու-
նից այն բերկրալից ապահով կյանքը, վորը նվաճել են աշխատա-
վորները Լենինի—Ստալինի կուսակցութան ղեկավարութամբ:

Ճապոնա-գերմանական Փաշիզմի գործակիցների այդ բանդան
կոմյերիտմիության մեջ՝ վոչ մի հենարան ու աջակցութուն
չգտնելով յերիտասարգության մասսաներում, թաղցնելով իր
ստոր, դավաճանական գեմքը, խաբեբայութամբ սողոսկել եր
ՀամԼԿՅԵՄ-ի ղեկավար որգանները մեջ և ամեն կերպ վնասա-
րարութուն եր անում յերիտասարգության և լենինյան կոմյե-
րիտմիության մեջ:

Նա կոմյերիտմիության անկայուն տարրերի միջից հավաքա-
գրել եր լրտեսների, դիվերսանտների, տեռորիստների և հետա-
խույզների կազմեր: Նա ամեն կերպ աշխատում եր ձախողել խոր-
հրդային յերիտասարգության աշխատանքը սոցիալիստական շի-
նարարության բոլոր բնագավառներում, թուլացնել նրա յեռանդն
ու խանդավառութունը, սերմանել նրա մեջ թերահավատութուն
ղեպի իր ուժերը և ղեպի խորհրդային հասարակակարգի ուժերը:

Տրոցկիստական-բուխարինական լրտեսներն ու վնասարարնե-
րը, ոգտադործելով կոմյերիտմիության ղեկավար որգաններում
իրենց ունեցած պոստերը, լուրջ վնաս հասցրին կոմյերիտմիու-
թյանը: Նրանք ամեն կերպ փորձում էլին կոմյերիտմիությունը
հակադրել կուսակցությանը և ձախողել յերիտասարգության կո-
մունիստական դաստիարակության մասին, նրա մեջ կատարվելիք
քաղաքական աշխատանքի մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի տված ցու-
ցումների կատարումը, քայքայում էլին առանձին կոմյերիտական
կազմակերպություններ և վիժեցնում ՀամԼԿՅԵՄ-ի աճումը, մա-
նավանդ գյուղում: Նրանք խոչընդոտ էլին հանդիսանում քաղա-
քական խմբակների ու դպրոցների աշխատանքին, աղտոտում էլին
պրոպագանդիստների կազմերը թշնամի տարբերով, հարբեցողու-
թյուն և խուլիզանութուն էլին արմատացնում յերիտասարգու-
թյան միջավայրում: Նրանք փորձում էլին վիժեցնել ստախանո-

վյան շարժումը յերիտասարգության մեջ, խորհրդային յերիտա-
սարգության ընդհանուր ու տեխնիկական կրթությունը, արդեւա-
կում էլին տեխնիկական ու հանրակրթական դրականության հրա-
տարակումը, փորձում էլին քայքայել տարրական, միջնակարգ
ու կոմյերիտական հանրակրթական դպրոցների աշխատանքը:
Յերիտասարգության մեջ խորհրդային իշխանության դեմ դըժ-
գոհութուն ստեղծելու համար նրանք արդեւակում էլին յերի-
տասարգության կյանքի կուլտուրական-կենցաղային պայմաննե-
րի բարելավումը, քայքայում էլին յերիտասարգությանն սպա-
սարկիզ ճաշարանների, ակումբների և զանազան կուլտուրական
հիմնարկները աշխատանքը, վիժեցնում էլին կուլտուրական,
սպորտային ապրանքների մատակարարումը, կազմալուծում էլին
կոմյերիտմիության Ֆիզկուլտուրային և սպաշտպանական աշխա-
տանքը:

Իսկ ինչո՞ւ հնարավոր դարձավ ժողովրդի թշնամիների այդ
ստոր վնասարարական աշխատանքը կոմյերիտմիության ներսում:
Կոմյերիտմիության աշխատանքի վո՞ր պայմաններն ու թերու-
թյուններն ո՞ր փանդակեցին այն բանին, վոր, չնայած զգաստու-
թյունը բարձրացնելու անհրաժեշտության մասին տրված ավելի
քան բավարար թվով լուրջ ազդանշաններին ու նախազուշացում-
ներին, կոմյերիտմիության ներսում յեղած ժողովրդի թշնամիներ-
ը, մինչև վերջին ժամանակներս, դեռ մնում էլին չմերկացված:

Այն փաստը, վոր կոմյերիտմիության ղեկավար աշխատող-
ներն անդեն գտնվեցին թշնամիների դեմ մղվող պայքարում այն
աստիճան, վոր մինչև վերջին ժամանակներս չկարողացան մեր-
կացնել ու ջախջախել կոմյերիտմիության ներսում յեղած թշնա-
միներին, ցույց է տալիս, վոր նրանք այդ խնդրի կողքով են ան-
ցել և չեն նկատել կոմյերիտմիության մեջ թշնամիների կատա-
րած քայքայիչ աշխատանքի առանձնահատկությունները:

Կոմյերիտմիության մեջ կատարված քայքայիչ աշխատանքի
այդ առանձնահատկությունն այն է, վոր կոմյերիտմիության ղե-
կավարության մեջ սողոսկած ժողովրդի թշնամիները յերի-
տասարգության քայքայման և յերիտասարգության միջից ի-
րենց համար համախորհներ հավաքողներու դիւսալոր մեթոդ
էլին ընտրել յերիտասարգության քաղաքական ու կենցաղային
քայքայման մեթոդը՝ առաջին հերթին հարբեցողության միջոցով:
Այդ նպատակով նրանք ոգտադործեցին կոմյերիտմիության ղեկա-
վար աշխատողների մեջ լայնորեն տարածված, բուլչեիզմին խորթ

պատկերացումները կենցաղի, վորպես անձնական, մասնա-
վոր գործի մասին, վորն իբր թե կապ չունի քաղաքականութեան
հետ: Այն հիմնական գրութի մոտացութեանը կոմյերիտմիութեան
դեկավար աշխատողները կողմից, վոր աշխատողի կենցաղային
կյանքն ու վարքագիծն անբաժանելի յեն նրա քաղաքական ու հա-
սարակական վարքագիծից, վոր աշխատողի բարոյական կայունու-
թեանը նրա քաղաքական կայունութեան պայմանն է հանդիսանում,
ունեցա՛վ այն հետեանքը, վոր աշխատողներին բարոյապես քայ-
քայելու ուղղութեամբ կոմյերիտմիութեան մեջ ժողովրդի թշնա-
միների կատարած լիտի, քայքայիչ աշխատանքը հակահարմար չէր
հանդիպում կոմյերիտմիութեան դեկավարները կողմից, իսկ հար-
բեցողութեանը համարվում էր սուրբ, այն ել «մասնավոր»
գործ: Աշխատողների փոխադարձ նորմալ, գործնական հարաբե-
րութեանն սկսեցին փոխարինել բաժակակցութեան հողի վրա
հիմնված բարեկամական հարաբերութեաններով, կոմյերիտական
նորմալ դիսցիպլինան՝ խմբակայնութեամբ ու բաժակակցների
փոխադարձ յերաշխալորութեամբ, կադրերն ըստ նրանց քաղաքա-
կան ու գործնական պիտանիութեան ընտրելու և բաշխելու բոլ-
շևիկյան սկզբունքը՝ այդ կադրերն ըստ բարեկամական կապերի
ընտրելու վոչ-բոլշևիկյան սկզբունքով: Այդպիսի հակահասարա-
կական բարքերի պայմաններում ժողովրդի թշնամիների համար
հեշտանում էր կոմյերիտմիութեան բարոյական-կենցաղային տե-
սակետից անկայուն աշխատողներին իրենց ցանցի մեջ վորսալու
հնարավորութեանը:

ՀամԼԿՅՅՄ-ի կենտրոնական կոմիտեյի, կենտկոմի բյուրոյի,
կենտկոմի քարտուղարների և առաջին հերթին ընկ. Կոսարեվի
հանցանքն այն է, վոր նրանք բոլշևիկյան զգաստութեանը բարձ-
րացնելու մասին կուսակցութեան տված ցուցումների կողքով են
անցել, յերեան են բերել քաղաքական անհանդուրժելի անհոգու-
թեան և աչքաթող են արել կենցաղային քայքայման միջոցով ժո-
ղովրդի թշնամիների կողմից կոմյերիտմիութեան մեջ կատարվող
քայքայիչ աշխատանքի հատուկ մեթոդները, վոչ միայն վճռական
պայքար չեն մղել դրա դեմ, այլև ներողամիտ են գտնվել նրա
նկատմամբ:

Քաղաքական ու գործնական մոտեցումը դեպի աշխատանքը,
դեպի մարդիկ, դեպի մարդկանց ստուգումը փոխարինվել են
«բարեկամական» հարաբերութեաններով: Հենց այդ պատճառով
էլ կոմյերիտմիութեան կենտկոմի բյուրոն անցել է կենցաղային

քայքայման մի շարք փաստերի կողքով և քաղաքական նշանակու-
թեան չի տվել դրան: Հենց այդ լուրջ քաղաքական սխալի շնոր-
հիվ է, վոր կոմյերիտմիութեան դեկավար որդանները՝ սկսած
ՀամԼԿՅՅՄ-ի կենտկոմից, ժամանակին նախաձեռնութեան չեն ցու-
ցարե՛րել և անթույլատրելի կերպով ուշացրել են կոմյերիտմիութեան
մեջ յեղած՝ ժողովրդի թշնամիների մերկացումը:

ՀամԼԿՅՅՄ-ի կենտկոմի բյուրոյում և կոմյերիտական շատ
դեկավար աշխատողների շրջանում գոյութեան են ունեցել կոմ-
յերիտմիութեան մեջ ժողովրդի թշնամիների սողոսկման վտան-
գի ուղղակի թերազնահատում և բացակայել է քաղաքական ա-
չալրջութեանը:

Կոմյերիտմիութեան դեկավարները մոտացել են, վոր բոլոր
թշնամական, հակակուսակցական ու հակախորհրդային խմբա-
վորումները միշտ ձգտել են թափանցել կոմյերիտմիութեան մեջ:
Կոմյերիտմիութեան ակտիվի մեջ լայնորեն տարածված են յեղել
այն միասակար, քաղաքականապես սխալ տրամադրութեանները,
թե կոմյերիտմիութեան մեջ թշնամիներ չկան:

Կոմյերիտմիութեան ներսում ժողովրդի թշնամիների կատա-
րած թշնամական աշխատանքին ոժանդակել է քննադատութեան
ու ինքնաքննադատութեան պակաս լինելը կոմյերիտմիութեան
մեջ՝ վերևից մինչև ներքև: Իսկական բոլշևիկյան ինքնաքննա-
դատութեանը բացակայել է ՀամԼԿՅՅՄ-ի կենտրոնական կոմի-
տեյի, ինչպես նաև կոմյերիտմիութեան մարզային, յերկրային
ու հանրապետական կոմիտեների աշխատանքում: Ժողովրդի թըշ-
նամիները, կոմյերիտմիութեան մեջ իրենց կատարած քայքայիչ
աշխատանքի համար, լայնորեն ոգտադործել են ՀամԼԿՅՅՄ-ի մի
քանի դեկավար աշխատողների թույլ կողմերն ու թերութեաննե-
րը, իրենց ընդունակութեաններն ու գիտելիքները գերադասա-
տելու նրանց հակումը և այդ գերադասատութեան հետ կապված
գոռոզամտութեանը, «աղայական» վարմունքը, շարքային կոմ-
յերիտականների ու շարքային աշխատողների փորձին ու կարծի-
քին ունկնդրել չցանկանալը:

Կոմյերիտմիութեան կազմակերպութեաններում լայնորեն
տարածված են գրասենյակային-բյուրոկրատական դեկավարման
մեթոդները: Ղեկավար ակտիվի կապը յերիտասարդութեան
մասաների հետ հաճախ սահմանափակվել է միայն ժողովներում
ու նիստերում յերիտասարդութեան հետ հանդիպելով. ակտի-
վիտները կենցաղում թույլ են կապված յերիտասարդութեան

հետ, չեն մասնակցում յերիտասարդութեան կուրտուրական ժամանցին, ամենորոյա չեն շփուում ու նրանց հետ ժամանակ չեն անցկացնում ակումբներում, թատրոններում, երգիչներին, սպորտային հրապարակներում: ՀամԼԿՅԵՄ-ի աշխատողներին պարփակվածութունն ու կոմյերիտովիութեան մասնակց կարված լինելն անխուսափելիորեն պայմաններ են ստեղծում այդ ղեկավարներին բյուրոկրատական քարացման ու նեխման համար:

Կոմյերիտական կոմիտեներին աշխատանքում բացահայտորեն անբավարար ե կոլեկտիվ ղեկավարութունը, ստորին աշխատողները քիչ են ներգրավուում հարցերի լուծմանը, վորը հաճախ հասցնում ե սխալ վորոշումներին ե վնաս ե տալիս կադրերի աճմանն ու դաստիարակութեանը: Այդպիսի պրակտիկան բացահայտորեն հակասում ե կոմյերիտովիութեան, վորպես յերիտասարդութեան կոմունիստական դաստիարակութեան կազմակերպութեան, ամբողջ բնույթին:

Փոխանակ նոր, արդեն աճած կադրերին համարձակորեն ղեկավար աշխատանքի առաջ քաշելու, գործը սահմանափակել ե միևնույն աշխատողներին մեկ կազմակերպութունից պարզապես մյուս կազմակերպութունը տեղափոխելով, վորը չէր կարող չհասցնել կոմյերիտովիութեան կադրերի լճացման ե այդ կապակցութեամբ՝ նրանց աճման դանդաղեցման:

Բոլոր կոմյերիտական կազմակերպութունների հերթական քաղաքական խնդիրը համարելով ժողովրդի թշնամիների ջախջախումն ու լիովին արմատախիլ անելը, կոմյերիտովիութունն ու նրա ղեկավար որդանները ժողովրդի թշնամիներից ստեղծարար կերպով մարքելը, նրանց վնասարարութեան հետքերին լիկվիդացիան ե ղեկավարութեան թերութունների վճռական վերացումը, վորոնք ոժանդակում են թշնամիների սողոսկմանը, ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի պլենումը վորոշում ե՝

1. Դատապարտել կոմյերիտովիութեան աշխատողների վոչբոլշևիկյան հանդուրժող վերաբերմունքը ղեպի կենցաղային քայքայման յերևույթները, վորպես վոչ վպյել խորհրդային յերիտասարդութեանը, առավել ես կոմյերիտովիութեան ակտիվ աշխատողներին: Դատապարտել, վորպես վոչ-բոլշևիկյան, ակտիվ մեջ տարածված այն տեսակետը, թե կենցաղը, հարեցողութունն, ցոփութունը—անձնական, մասնավոր գործ ե: Յուրաքանչյուր կոմյերիտականի գիտակցութեան մեջ արմատացնել այն

քմբնումը, վոր կենցաղն անբաժանելի յե քաղաքականութեանն է, վոր բարոյական քայքայումը ղեպի կործանումն ե տանում կոմյերիտականին, վորպես քաղաքական ու հասարակական աշխատողի, ե աշխատողի բարոյական անաղարտութունը, յստահելի յերաշխիք ե հանդիսանում քաղաքական քայքայումից ղեքմ մնալու համար:

Յուրաքանչյուր կոմյերիտականի ե կոմյերիտական ակտիվիստի պարտքն ու պարտականութունն ե՝ վճռական պայքար մղել հարեցողութեան ու կենցաղային քայքայման դեմ: Աշխատողների գնահատման, ընտրութեան ու առաջադման ժամանակ անպայման պետք ե հաշվի առնլին նրանց բարոյական հատկութունները:

2. Դատապարտել կոմյերիտովիութեան աշխատողների քաղաքական, գործնական փոխադարձ հարաբերութունները «յեղբայրական», «բարեկամական» հարաբերութուններով փոխարինելու պրակտիկան, վորոնք քայքայում են բոլշևիկյան կազմակերպութեան ու ղեկավարութեան հիմքերը, կոմյերիտովիութեան մեջ ստեղծում են անկզբունքայնութուն, գաղափարազրկութուն ե անպատասխանատու փոխադարձ յերաշխալութուն:

Վերականգնել աշխատողների փոխադարձ նորմալ հարաբերութունները՝ հիմնված բոլշևիկյան սկզբունքայնութեան, աշխատանքի սխալների ու թերութունների փոխադարձ քննադատութեան վրա:

3. Վերականգնել կոմյերիտովիութեան բոլոր ղեկավար աշխատողների ամենորոյա, կենդանի կապը յերիտասարդութեան հետ, վորպես յերիտասարդութեան ճիշտ ղեկավարման ու դաստիարակման հիմնական պայմանը: Վերջ տալ նիստարարութեան ու դրասենյակայնութեան: Կոմյերիտովիութեան աշխատողներն իրենց ժամանակի մեծ մասը պետք ե անցկացնեն այնտեղ, վորտեղ գտնվում ե յերիտասարդութունը, նրա հետ միասին, ոգնելով նրան կազմակերպելու իր աշխատանքը, հանգիստն ու կինցաղը: Յերիտասարդութեան հետ հաստատված առորոյա կապը յերաշխիք ե բյուրոկրատական քարացումից ղեքմ մնալու համար, կարեւորագույն պայման ե կոմյերիտովիութեան ակտիվ աճման ու ամբացման համար: Ամենորոյա կապը յերիտասարդութեան հետ ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմին կողմի մաքրվելու թշնամի, քայքայված տարրերից ե զանազան «աստիճանավորներից», վորոնք խուսափում են գործնական սև աշխատանքից:

4. Վերջ տալ առանց քննարկման, առանց կոմիտեյի անդամներին ու կոմյերիտական ակտիվի կարծիքն ուշադրութեամբ լսելու, վորոշումներ ընդունելով ղեկավարելու պրակտիկային: Կոմյերիտմիութեան բոլոր կազմակերպութեւններում՝ սկսած ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմից՝ ապահովել կոմյերիտմիութեան աշխատանքի հարցերի կոլեկտիվ քննարկումն ու կոլեկտիվ լուծումը, վորպէս կոմյերիտականների ու ակտիվի քաղաքական աճման կարևորագույն պայմանը:

Կոմյերիտմիութեան մարզկոմներին, յերկրկոմներին, քաղկոմներին ու շրջկոմներին բյուրոներում պետք է ընտրվեն վոչ միայն այն կոմյերիտական աշխատողները, վորոնք աշխատում են կոմյերիտմիութեան ապարատում, այլև ձեռնարկութեւններում, կորսնտեսութեւններում, խորհատեսութեւններում ու հիմնարկներում աշխատող ակտիվիստ կոմյերիտականները:

Պարտավորեցնել կոմյերիտմիութեան բոլոր կոմիտեներին՝ առնվազն յերկու ամիսը մեկ անգամ հրավիրել շրջանային, քաղաքային ակտիվի, խոշոր ձեռնարկութեւնների ակտիվի լայն ժողովներ, վորոնց, բացի ղեկավար աշխատողներից, պետք է մասնակցեն կոմյերիտական խմբակային կազմակերպիչները, սեկտերի կոմյերիտկազմակերպիչները, արդյունաբերութեան ու դրուղատեսութեան ստախանովական կոմյերիտականները: Ակտիվի այդ ժողովներում պետք է քննութեան առնվին կոմիտեների հաշվետվութեւնները՝ ըստ աշխատանքի առանձին բնագավառներին, ակտիվին հետաքրքրող քաղաքական հարցերը, կոմյերիտական աշխատողների սխալ վարքին վերաբերող փաստերը և կոմիտեների հաղորդագրութեւններն այն միջոցների մասին, վորոնք ձեռք են առել նրանք կոմյերիտականների ազդանշանների ու բողոքների առթիվ:

Պլենումը պարտավորեցնում է կոմյերիտական բոլոր կազմակերպութեւններին՝ աշխատանքից հանել կոմյերիտական այն աշխատողներին, վորոնք կփորձեն ճնշել կամ սահմանափակել բոլշևիկյան քննադատութեւնը և ինքնաքննադատութեւնը կոմյերիտմիութեան մեջ:

5. Վորպէս սխալ ու միասակար, վերացնել կադրերի ընտրութեան ու բաշխման ասպարեղում գոյութեւն ունեցող այն պրակտիկան, յերբ ակտիվի աճած, ղեկավար աշխատանքի ընդունակ կադրերն առաջ չեն քաշվում ղեկավար աշխատանքի, այլ ղեկավար պաշտոնները դրավում են հին, այսպէս կոչված կոմյերի-

տական «ասիտխարինելի» աշխատողները նեղ շրջանակով, վորոնց մեկ կազմակերպութեւնից փոխադրում են մյուսը:

Կոմյերիտմիութեան առաջիկա կոնֆերանսներն ու համագումարները պետք է անցնեն նոր, յերիտասարդ կադրերին համարձակորեն լենինյան կոմյերիտմիութեան մեջ դանազան ղեկավար աշխատանքի առաջ քաշելու նշանաբանով:

6. Սահմանել կոմյերիտականների առջև կազմակերպութեան քարտուղարների ամենախիստ հաշվետվութեւն՝ կոմյերիտական միջոցների ծախսման և կոմյերիտական տնտեսութեան վիճակի մասին:

Կոմիտեների քարտուղարները պետք է պարբերաբար հաշիվ տան կոմիտեներին պլենումներում բյուջեյի կատարման մասին:

7. Դատապարտել վտարման կամ կոմյերիտմիութեան մեջ վերականգնելու հարցերի քննարկման ժամանակ առանձին կոմյերիտականների բախտին անհոգի, ձեւական մոտեցում ցուցաբերելու ներկա պրակտիկան: Պարտավորեցնել կոմյերիտմիութեան կոմիտեներին վտարելու կամ կոմյերիտմիութեան մեջ վերականգնելու հարցը քննարկելիս ապահովել առավելագույն ընկերական ուշադրութեւն ու զգայուն վերաբերմունք, մանրամասն պարզելով կոմյերիտականների կատարած զանցանքները. չսահմանափակվել ամբողջ գործը միայն հարցաթերթիկի ու կենսագրութեան տվյալների ձեւական պարզաբանմամբ, զնահատելով կոմյերիտականներին նախ և առաջ ըստ ելութեան, այսինքն՝ ըստ քաղաքական ու գործնական հատկութեւնների, ըստ նրանց նվիրվածութեան ժողովրդին, կոմունիստական կուսակցութեանը, խորհրդային իշխանութեանը:

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՏԱՐԻՄ ՈԳՆԱԿԱՆՆ Ե

Սոցիալիզմի այն յերիտասարդ սերունդը, վորը կյանքի ասպարեզն է մտել Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունից հետո, մեր յերկրի պարծանքն է, խորհրդային ժողովրդի և բոլշևիկյան կուսակցության ամենաարժեքավոր կապիտալը:

Վստահությունը ղեպի վաղվա որը, իրեն ամեն մի ասպարեզում ցույց տալու հնարավորությունը, կուսակցության և կառավարության հոգատարությունը, ժողովրդի սերը ղեպի պատանի զավակներն ու աղջիկները—ասա թե ինչն է խթանում խորհրդային յերիտասարդության քաղաքական և կուլտուրական աճումը:

Իդեալես առողջ, կոմունիստական կուսակցությանը մինչև վերջը նվիրված մեր յերիտասարդությունն աշխատանքի հիանալի որինակներ է ցույց տալիս մեր կյանքի բոլոր ասպարեզներում: Մեր անծայրածիր յերկրում չկա այնպիսի մի անկյուն, վորտեղ կոմյունիստականներն ամենախիզախ և ամենաառաջավոր գործի նախաձեռնողները չլինեն:

Բազմամիլիոն լենինյան կոմյունիստներն իրավամբ կուսակցության ամենահավատարիմ ոգնականն է՝ խորհրդային յերիտասարդությունը կոմունիստական վոգով զատախարակելու համար մղվող պայքարում: Տասնյոթ տարի առաջ մեծ Լենինն առել էր, թե յերիտասարդ սերնդի կյանքի նպատակն է՝ կառուցել կոմունիստական հասարակություն: Կոմյունիստներն մեծ ղեր է խաղում մեր յերկրում: Կոմյունիստներն միշտ, բոլոր լուրջ ետապներում, կուսակցության հետ է յեղել: Կուսակցության և նրա Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարությամբ կոմյունիստներն անդուլ պայքար է մղել ժողովրդի թշնամիների, ամեն գույնի ոպորտունիստների դեմ: Յե՛վ քաղաքացիական պատերազմի տարիներին, և՛ ծավալուն սոցիալիստական շինարարության տարիներին, ստալինյան հնգամյակների տարիներին, վորոնք հզոր ինդուստրիալ տերության վերածեցին մեր յերկիրը:

Երիտասարդությունն իրեն ցույց է տվել վորպես ակտիվ, սակդճարար քաղաքական ուժ:

Միջազգային իրադրության բարդությունը, յերկրում մղվող զատախարակյին պայքարը զգալիորեն բարձրացնում են կոմյունիստներն, նրա ղեկավարությանը ներկայացվող պահանջները: Կատարելապես ակներև է, վոր թշնամին վործում էր և փորձելու յե ներխուժել կոմյունիստական կազմակերպություններին մեջ, ազդեցություն գործել յերիտասարդության վրա: Կոմյունիստների ղեկավար ակտիվից քաղաքականապես անհող մարդիկ և ինքնազոհ բյուրոկրատները միայն կարող էյին կարծել, թե թշնամիները մեզ մոտ՝ կոմյունիստների Կենտկոմի մեջ, մարդկոմներ և յերկրկոմներ մեջ իրենց քեթը չեն կոխի: Փաստերը հակառակը ցույց տվին: Ինչպես ասում է ՀամԼԿՅՄ-ի Կենտկոմի չորրորդ պլենումի վորոշումը, թշնամիները գործել են կոմյունիստների կազմակերպություններում յերկերեսայնիստներն անելով և խարելով, սողոսկել են նրանք ղեկավար պոստերի մեջ, մինչև իսկ Կենտկոմի մեջ: Ժողովրդի լկախ թըշնամիներ Մալտանովը, Լուկյանովը, Փայրերդը, Բուրեկինը, Անդրեյեվը և ուրիշները, ոգտվելով ՀամԼԿՅՄ-ի Կենտկոմի Բյուրոյի մի շարք ղեկավար աշխատողներին և առաջին հերթին ընկեր Կոսարեվի ապուշային հիվանդությունից՝ քաղաքական կուրությունից, իրենց ստոր, կեղտոտ գործն էյին անում: Նրանք՝ տրոցկիստական-բուխարինական լրատները, ղիվիտսանտները և տեոորիստները, ցանկանում էյին հետ դարձնել պատմության անիվը, հետ նետել յերկիրը և նրա յերջանիկ յերիտասարդությունը ղեպի կապիտալիզմը, տալ նրան կալվածատերերին և Ֆարրիկանաներին ի ստրկություն:

Նրանք՝ կեղտոտ տականքները, ստահակները՝ կեղծ ժպիտը յերեսներին, մասսաներում հենարանից զրկված, խարելությամբ թափանցել էյին կոմյունիստների մեջ, նրանք վնասում էյին յերիտասարդությանը, փորձելով հակադրել կոմյունիստներնու կուսակցությանը, կտրել նրան մեծ մորից՝ Համամիութենական կոմունիստական կուսակցությունից: Նրանք վիթեցնում էյին կուսակցության Կենտկոմի վորոշումը յերիտասարդության մեջ քաղաքական աշխատանք կատարելու մասին, նրանք արդելակում էյին դատախարակչական աշխատանքը, ամեն կերպ աշխատելով խարդախությամբ փոխարինել այն կենցաղային քայքայմամբ:

Յերիտասարդությունը, մեր հրաշալի յերիտասարդությունը, հեղափոխութեան փառքն ու պարծանքն է: Սրբիկանների խղճուկ խմբակին չհաջողվեց—և յերբեք չի հաջողվել—կանգնեցնել յերկրի հաղթական առաջընթացը, շեղել յերիտասարդությանը Լենինին—Ստալինի կուսակցութեան գծած ուղուց: Յերիտասարդ սահմանապահների, ողաչունների, գործարանների ու դաշտերի ստախանովականների հերոսական քաջագործությունները, խանդավառությունն և նվիրվածութեան զգացմունքը դեպի կուսակցությունն ու հայրենիքը—լավագույն և ամենամիշտ ցուցանիչն են խորհրդային յերիտասարդ սերնդի առողջութեան և ամբողջութեան:

Ժողովրդի թշնամիները վախենում էին իրենց քիթը կոխելու խորհրդային առողջ յերիտասարդութեան մեջ: Նրանք վախենում էին նրանից, ինչպես կրակից: Նրանք քաղաքականապես ու բարոյապես անկայուն տարրերի մեջ գործակիցներ էին փնտրում իրենց համար: Քաղաքական և կենցաղային քայքայման մեթոդով էին գործում թշնամիները: Նրանք շողոքորթութեամբ և ստորաքարշութեամբ էին շրջապատում կոմյերիտմիութեան մարդկամների, յերկրկոմների և կենտկոմի քաղաքական կույրերին: Ահա թե ինչու կոմյերիտմիութեան ղեկավար աշխատողներից շատերը, ընկ. Կոսարեվի հետ միասին, անակնկալի առաջ գտնվեցին, թույլ տվին քաղաքական լուրջ սխալներ:

«ՀամԿՅՅՄ-ի կենտրոնական Կոմիտեի, կենտկոմի Բյուրոյի, կենտկոմի քարտուղարների և առաջին հերթին ընկ. Կոսարեվի հանցանքն այն է, վոր նրանք բոլշևիկյան զգաստությունը բարձրացնելու մասին կուսակցութեան տված ցուցումների կողքով են անցել, յերևան են բերել քաղաքական անհանդուրժելի անհոգություն և աչքաթող են արել կենցաղային քայքայման միջոցով ժողովրդի թշնամիների կողմից կոմյերիտմիութեան մեջ կատարվող քայքայիչ աշխատանքի հատուկ մեթոդները, վոր միայն վճռական պայքար չեն մղել դրա դեմ, այլև ներողամտ են գտնվել նրա նկատմամբ»:

Անբարոյականությունը, քայքայումը կենցաղում անխուսափելիորեն հանգում են քայքայման քաղաքականութեան մեջ: Անձնականն ու մասնավորը անխղիճորեն կապված է հասարակականի հետ: «Պետք է, վոր Ժամանակակից յերիտասարդութեան դաստիարակման, կրթութեան և ուսուցման ամբողջ գործը հանդիսանա կոմունիստական բարոյականութեան դաստիարակումը նրանում»: Այդ է սովորեցրել մեկ Լենինը, այդ է սովորեցնում

մեկ Ստալինը: Անձնականը յենթարկված է հասարակականին: Մեր մորալը, մեր բարոյականությունը յենթարկված են բանվոր դասակարգի դասակարգային պայքարի շահերին: Կոմյերիտմիութեան ղեկավար աշխատողները և ընկ. Կոսարեվը անհանդուրժելի վերաբերմունք էին ցույց տալիս ինքնաքննադատութեանը, յենթադրելով, թե ավագանիական ինքնասիրութեանը վնաս է հասնում, յերբ նրանց սխալների մասին խոսում են թերթի էջերում:

Յերիտասարդութեան մասնաներից կտրված լինելը, «բարեկամական» մոտեցումը կազմերի ընտրութեան գործին, կենցաղային քայքայումը—բոլշևիզմին խորթ այս բոլոր հատկութեաններն անխուսափելիորեն ձախողումներ են առաջացնում քաղաքական աշխատանքում: Կոմյերիտական ղեկավար աշխատողները, առաջին հերթին ՀամԿՅՅՄ-ի կենտկոմի քարտուղարները, պետք է ավելի մոտ կանգնեն մասնաներին, ավելի հաճախ յինն են այնտեղ, վորտեղ յերիտասարդությունն է գտնվում, ունկընդրեն նրա ձայնին և պահանջներին: Մաքրվել ապականությունից, արմատախիլ անել կոմյերիտմիութեանից թշնամու գործակալութեան բոլոր մնացորդները, հաղեցնել ստորին և ղեկավար կազմակերպութեանների կյանքը դադարախախտութեամբ, սկզբունքայնութեամբ և ինքնաքննադատութեամբ, նոր կազմերին ավելի համարձակ առաջ քաշել ղեկավար աշխատանքի և վճարար ազատվել վաղ ծերացած յերիտասարդ բյուրոկրատներից ու աստիճանավորներից—ահա լենինյան կոմյերիտմիութեան խընդիրը:

Հատուկ պատասխանատվություն է ընկնում կոմյերիտական մամուլի վրա: «Կոմսոմոլսկայա Պրավդան»-ն և նրա կուլեկտիվը վորք պատասխանատվություն չեն կրում կոմյերիտմիութեան աշխատանքում տեղի ունեցած քաղաքական բոլոր ձախողումների համար: Կոմյերիտական Ժուռնալիստներից վոմանք կողմնակի դիտողի դերում գտնվեցին և չէին պայքարում թըշնամիների դեմ: Միայն դրանով և բացատրվում այն, վոր ամենալուրջ ազդանշանները, վորոնք ավելի քան շատ են յեղել թերթում, խեղդվում էին: Այդպիսի Ժուռնալիստներն, ըստ էյութեան, թշնամու գործակիցներն են:

Կուսակցական կազմակերպութեանները կոմյերիտմիութեան նկատմամբ պետք է տանապատկեն իրենց ուշադրությունը և ամենորոյս ողնությունը: Կուսակցական ղեկավարների վրա պա-

56609-66



տասխանատուութիւնն և ընկնում՝ կոմյերիտական կազմերի, ամբողջ յերիտասարդութեան կոմունիստական դաստիարակման, բոլշևիկյան կոմիման համար:

Կոմյերիտութիւնը կաշխատի բոլշևիկներն: Դրա յերաշխիքն և այն սերը, հոգատարութիւնը և անդուռ ուշադրութիւնը, վարը ցուցց ևն տալիս կոմյերիտութեանը և յերիտասարդութեանը կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն, ընկեր Ստալինը: Լենինյան կոմյերիտութիւնն իր ամբողջ աշխատանքում պետք և զեկամարվի այն նշանավոր խորհրդով, վերն ուղղի և ընկեր Ստալինը կոմյերիտականներին ու կոմյերիտուհիներին՝ «Սովորեցեք բոլշևիզմը և սուաջ տարեք տատանվողներին: Քիչ չազակրատեցեք, ավելի շատ աշխատեք—և ձեր գործը գլուխ կդա անպատճառ»:

«Պրավդա» 1937 թ. դեպտոսի 29, № 288:

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՆԱՆՈՒՑՈՒՄ

Մարտի 5-ին իր աշխատանքը վերջացրեց ՀամԼԿՅՅՄ ԿԿ-ի հերթական V պլենումը: ՀամԼԿՅՅՄ ԿԿ-ի պլենումը քննեց հետևյալ հարցերը.

1. Ազգային հանրապետությունների և մարզերի կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի մասին (Ագրրեջանի, Ղազախստանի և Ուզբեկստանի կոմյերիտամիության կենտկոմների ղեկուցումները):

2. Կոմյերիտամիությունից վտարելիս կոմյերիտական կազմակերպությունների կատարած սխալների մասին, ՀամԼԿՅՅՄ-ից վտարվածների բողոքարկումներին հույս տրված ձևական-բյուրոկրատական վերաբերմունքի մասին և այդ թերությունները վերացնելու միջոցառումների մասին:

3. Յերիտասարդությունը կոմյերիտամիության մեջ ընդունելու գործում յեղած թերությունները վերացնելու մասին:

Պլենումը ԿԿ-ի Բյուրոյի կազմի մեջ մտցրեց ՀամԼԿՅՅՄ Մոսկվայի մարզկոմի քարտուղար ընկ. Վ. Ա. Ալեքսանդրովին, Լենինգրադի մարզկոմի քարտուղար ընկ. Ա. Ի. Լյուբինին, Ուկրաինայի ԼԿՅՅՄ ԿԿ-ի քարտուղար ընկ. Ս. Ի. Ուսենկոյին և «Комсомольская правда» թերթի խմբագիր ընկ. Ն. Ա. Միխայլովին:

Պլենումի աշխատանքին մասնակացում էր ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար ընկեր Ա. Ա. Անդրեյեվը:

Պլենումը համապատասխան փորձումներ ընդունեց քննարկված հարցերի մասին:

ՀԱՄԼԿՅՅՄ Կենտկոմ

ՀԱՄԼԿՅԵՄ-Ի ԿԿ-Ի ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԱԴԻԲԵՋԱՆԻ, ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՅԵՎ ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԿ-ՆԵՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄԱՐԶԵՐՈՒՄ
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՄԱՍԻՆ

Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը, վոր վարում է խորհրդային իշխանությունը ՀամԿ(բ)Պ ղեկավարու-թյամբ, խորհրդային յերիտասարդության համար, անկախ նրա ազգային ծագումից, ապահովել է սոցիալիզմի համար մղվող պայքարին ակտիվորեն մասնակցելու բոլոր հնարավորություները: Խորհրդային իշխանության գոյություն տարիների ընթացքում ազգային հանրապետությունների և մարզերի յերիտասարդության միջից աճել ու առաջ են քաշվել հարյուր-հազարավոր յերիտասարդներ, վորոնք աշխատում են վորպես տրակտորիստներ ու կոմբայնավարներ, տեխնիկներ ու ինժեներներ, մանկավարժներ ու բժիշկներ, զանազան տնտեսական ու խորհրդային հիմնարկների ղեկավարներ:

Ազգային հանրապետությունների և մարզերի աշխատավոր յերիտասարդությանը մատչելի յե ամեն մի վորակյալ աշխատանք, ամեն մի մասնագիտություն: Ազգային հանրապետությունների և մարզերի յերիտասարդության համար յայտրեն բաց են դպրոցական բոլոր հաստատությունների դռները: Ազրբեյջանի դպրոցներում սովորում են 549 հազար յերեխա, Ուզբեկստանի՝ 900 հազար, Ղաղախստանի՝ 947 հազար: Ազրբեյջանի տեխնիկումներում և բուհերում սովորում է 30 հազար, Ուզբեկստանի՝ 35 հազար, Ղաղախստանի՝ 29 հազար հոգի:

Ազգային հանրապետությունների և մարզերի յերիտասար-

դուժխոնն աճում է քաղաքականագետ և կուլտուրագետ, բարձրանում է նրա քաղաքական ակտիվութունը, վորն առանձնապես ցայտուն կերպով արտահայտեց յերիտասարգությունը ԽՍՀ Միութեան Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ:

Կոմյերիտական կազմակերպություններն ազգային հանրապետություններում և մարզերում պարտավոր են ամենից առաջ յերիտասարգությանը զխափորել նրա աշխատանքի, պայքարի և ուսման մեջ, պարտավոր են ամբողջ յերիտասարգությանը կազմակերպել և համախմբել Լենինի—Ստալինի կուսակցութեան խնդիրների իրականացման շուրջը: ՀամԼԿՅՅՄ—ի ԿԿ—ի սլեյնումը նշում է, վոր յերիտասարգութեան քաղաքական ու կուլտուրական աճումից կազմակերպական—քաղաքական աշխատանքի հետ մնալու հետևանքով, Ադրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի շատ կոմյերիտական կազմակերպություններ իրենց այդ կարևորագույն պարտականութեանը անբավարար են կատարում:

Յերիտասարգութեան աճումից կոմյերիտմիութեան կազմակերպական—քաղաքական աշխատանքի հետ մնալն ամենից առաջ այն է, վոր կոմյերիտական կազմակերպությունները գաղափարական—դաստիարակչական բավականաչափ աշխատանք չեն կատարում: Այսպես, Ղազախստանում մոտ 50 հազար կոմյերիտական միջև այժմ վորքե քաղաքացուցում կամ խմբակում չի սովորում: Կոմյերիտականների քաղաքական լուսավորութեան ամբողջ ցանցի համար հանրապետութեան մեջ պատրաստվում է ընդամենը 100 պրոպագանդիստ: Հակառակ այն բանի, վոր կոմյերիտականներն ու յերիտասարգությունը հսկայական ձգտում ունեն համԿ(բ)Կ պատմությունն ուսումնասիրելու, կոմյերիտմիութեան կոմիտեները բոլշևիկյան կուսակցութեան պատմությունն ուսումնասիրելու դպրոցներ և խմբակներ չեն կազմակերպում:

Ադրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի կենտրոնական կոմիտեները իրենց աշխատանքի մեջ ամենալուրջ սխալն են առնում, յերբ յերիտասարգութեանը չեն ծանոթացնում աշխատավորներին անցյալ՝ մինչհեղափոխական կյանքին, նրան անբավարար են ծանոթացնում Լենինի—Ստալինի կուսակցութեան դեկավորութեամբ բանվոր դասակարգի մղած հերոսական պայքարին՝ առաջներում ճնշված ժողովուրդներին ազգային ճնշումից ու ստրկացումից ազատագրելու համար: Կոմյերիտական կազմակերպությունների շատ ղեկավար աշխատողներ, շաղակրատելով

քաղաքացիութեան ոգտի մասին, միաժամանակ չեն կազմակերպում քաղաքական անհրաժեշտ պրակտիկական թարգմանությունն ազգային լեզուներով՝ կոմյերիտական քաղցանցի համար: Նույնիսկ լենինյան կոմյերիտմիութեան ծրագիրն ու կանոնադրությունը թարգմանված և հրատարակված չեն մի շարք ազգային հանրապետություններում և մարզերում:

Կոմյերիտմիութեան կոմիտեները, տեսնելով յերիտասարգութեան հսկայական ձգտումը դեպի կուլտուրա, դեպի գիտելիքներ, դրա հետ մեկտեղ շատ քիչ բան են անում մասսայական կուլտուրական և լուսավորական աշխատանք ծավալելու համար: Առանձնապես անհանդուրժելի յե կոմյերիտմիութեան թույլ աշխատանքը յերիտասարգութեան մեջ անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու գործում: Միայն դրանով են բացատրվում հենց իրենց՝ կոմյերիտականների մեջ յեղած անդրագիտութեան խայտառակ փաստերը:

Կոմյերիտմիութեան կազմակերպական—քաղաքական աշխատանքի յերիտասարգութեան աճումից հետ մնալու ամենապայտուն օրինակն է հանդիսանում առաջավոր յերիտասարգութեան չափազանց անբավարար ներդրվումը կոմյերիտմիութեան մեջ: Ղազախստանի կոմյերիտական կազմակերպությունը 1937 թվականի ինն ամսվա ընթացքում ընդունել է ընդամենը 23787 հոգի, Ադրբեջանի կոմյերիտական կազմակերպությունը նույն ժամանակամիջոցում ընդունել է ընդամենը 11330 հոգի, իսկ Ուզբեկստանի կոմյերիտական կազմակերպությունը 1937 թվականի վեց ամսվա ընթացքում ընդունել է ընդամենը 10491 հոգի: Ադրբեջանի նախթարգումարերութեան մեջ 1937 թվականի ընթացքում կոմյերիտականների թիվը վոր միայն չի ավելացել, այլ նույնիսկ պակասել է: Ղազախստանում մինչև այժմ էլ կոմյերիտմիութեան սկզբնական կազմակերպություններ չկան 278՝ կոլտնտեսութեան մեջ, Ուզբեկստանում՝ 3750 կոլտնտեսութեան մեջ:

Ղազախստանի կոմյերիտմիութեան կոմիտեները, մանավանդ կոմյերիտմիութեան մարզկոմները շարունակ արգելակում են կոմյերիտմիութեան աճումը: Այսպես, օրինակ, Ղազախստանի 113 շրջկոմներում յերկար ժամանակ չքննված է մնացել կոմյերիտմիութեան մեջ մտնելու 5683 դիմում:

Ադրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի կոմյերիտական կազմակերպություններն աշխատանք են կատարում առնչելապես

չրջանային կենտրոնները յերիտասարգութեան մեջ, առանց ու-
շաղթութեան թողնելով կոլանտեսութեանները յերիտասարգու-
թեանը, մանավանդ այնտեղ, վերտեղ սկզբնական կազմակերպու-
թեաններ չկան:

ՀամԼԿՅԵՄ-ի ԿԿ-ի պլենումը նշում է, վոր կոմյերիտմիու-
թեան շատ աշխատողներ կտրվում են յերիտասարգութեան կեն-
ցաղից, պայքար չեն մղում Ֆեոդալական-ճորտատիրական մնա-
ցուկների դեմ: Ժողովրդի թշնամիները՝ տրոցկիստները, բուխա-
րինականները և նացիոնալիստներն ոգտադործում են ին կոմյե-
րիտմիութեան աշխատանքի թուլութեանն այդ բնադալառում և
ամեն կերպ աշխատում են ին արմատացնել յերիտասարգութեան
մեջ Ֆեոդալական-բայական մնացուկները, կրոնական ծեսերի
պահպանումը, կալիքը, դեռահասների նշանումն ու նրանց հետ
ամուսնանալը, չադրա, փարանջա կրելը և այլն: Կոմյերիտմիու-
թեան կոմիտեները, հանդիպելով Ֆեոդալական-բայական մնա-
ցուկների դրսևորմանն առանձին կոմյերիտականների և նույնիսկ
ակտիվիստների մոտ, նրանց վճռական հակահարված չեն տա-
լիս: Կնոջ նկատմամբ Ֆեոդալական-բայական հայացքներ կան
նաև կոմյերիտականների ու ակտիվիստների մի մասում: Պա-
տահական չե այն, վոր ազգային հանրապետութեաններում և
մարդերում շատ քիչ աղջիկ կա կոմյերիտական ղեկավար աշ-
խատանքի ասպարեզում: Ղազախստանում կոմյերիտմիութեան
չրջկոմիտեների քարտուղարներն մեջ միայն 6 աղջիկ կա, Ուզբեկիս-
տանում՝ 4, Ադրբեջանում՝ վոչ մի աղջիկ չկա:

Կոմյերիտական կազմակերպութեանները բավականաչափ չեն
ոգնում ժողովրդական լուսավորութեան օրգաններին՝ վերացնե-
լու թշնամական մնասարարութեանը նոր դպրոցների շինարարու-
թեան ու ծախարման ասպարեզում, դասագրքերի ու դպրոցական
ձեռնարկների հրատարակման և ուսուցչական կազմերի պատ-
րաստման բնադալառում: Կոմյերիտական շատ կազմակերպու-
թեաններ չեն նկատել թշնամու այն աշխատանքը, վորի նպա-
տակն էր կտրել ազգային հանրապետութեանների և մարզերի աշ-
խատավորներին ուսման մեծ ժողովրդի կուլտուրայից, չեն նկա-
տել ժողովրդի թշնամիների փորձը՝ վիժեցնել ուսուսաց լեզվի,
ուսուսաց դրականութեան ուսումնասիրութեանը ազգային դպրոց-
ներում, տեխնիկումներում և բուհերում:

Ադրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի կոմյերիտմիու-
թեան աշխատանքում գոյութեան ունեցող այդ բոլոր խոչորա-

գույն թերութեանները բացատրվում են նախ և առաջ նրա-
նով, վոր շատ կոմիտեներ յերկար ժամանակ աղտոտված են ին
թշնամի և քայքայված տարրերով, յերիտասարգութեանից կտր-
ված մարդկանցով: Այն կարևորագույն պատճառները մեկը, վո-
րով ազգային հանրապետութեաններում ու մարզերում կազմա-
կերպական-քաղաքական աշխատանքը հետ և մնում կոմյերիտ-
միութեան անուսից, կոմյերիտական շատ աշխատողների քաղա-
քական անդրադիտութեանն ու կիսազրադիտութեանն է: Ազգա-
յին հանրապետութեանների և մարզերի կոմյերիտմիութեան աշ-
խատանքում յեղած այդ թերութեանները բացատրվում են նաև
նրանով, վոր կոմյերիտմիութեան այդ կազմակերպութեաններում
բացահայտորեն պակասում է քննադատութեանը և ինքնաքն-
նադատութեանը: Կոմյերիտական ղեկավար աշխատողների մեջ
գոյութեան ունեն վոչ-բոլշևիկյան բարքեր (քննանեականու-
թեան, փոխադարձ յերաշխափորութեան և գոռոզութեան):
Կոմյերիտմիութեան միջանի կոմիտեներում արմատացել են դե-
կավարման գրասենյակային-բյուրոկրատական մեթոդներ: Կոմ-
յերիտմիութեան շատ աշխատողներ, փոխանակ հոգ տանելու
սկզբնական կազմակերպութեանների ամբողջական համար, փոխա-
նակ ոգնելու կոմյերիտականներին ու յերիտասարգութեանը՝
նրանց հուզող հարցերը լուծելու, փակվում են կոմիտեներում,
քնդուծում են այնպիսի բանաձևեր և վորոշումներ, վորոնք վոչ
վոքին պետք չեն: Մինչև այժմ ել գոյութեան ունի համարձա-
կորեն նոր ակտիվ առաջ քաշելու վախը: Ղեկավարման համար
նոր մարդիկ առաջ քաշելու փոխարեն, հաճախ տեղափոխում և
պաշտոնափոխում են միեևույն մարդկանց, վորոնց մեջ քիչ չեն
յերիտասարգութեանից կտրված մարդիկ:

Ադրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի կոմյերիտմիու-
թեան կենտրոնական կոմիտեները թույլ են պայքարում կոմյե-
րիտական կազմակերպութեանների աշխատանքում յեղած այս
բոլոր թերութեանների դեմ: ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի միջանի
բաժինները, մանավանդ գյուղյերիտասարգութեան բաժինը, ու-
սանող յերիտասարգութեան բաժինը, անհրաժեշտ ոգնութեան
չեն ցույց տալիս ազգային կազմակերպութեանների կոմյերիտ-
միութեանը և ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմում չեն առաջադրում նրանց
աշխատանքի կարևորագույն հարցերը:

ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի պլենումը վորոշում է՝
1. Ստաջարկել Ադրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի

կոմյերիտմիութեան բոլոր կազմակերպութեանն ընդհանրապես ղեկավարելու գաղափարական-դաստիարակչական և քաղաքական աշխատանքը: Անհրաժեշտ է կազմակերպել բոլոր կոմյերիտականների քաղաքական նորմալ ուսուցումը քաղխմբակներում և դպրոցներում, ապահովելով պրոպագանդիստների, ագիտատորների և դասախոսների խնամքով ընտրութեանը սկզբնական կոմյերիտական կազմակերպութեանն չհամար: Պարտավորեցնել կոմյերիտմիութեան կենտրոնական կոմիտեներին 1938 թվականի ընթացքում հանրապետական և մարզային յեռամայա կուրսերում պատրաստել՝ Ազրբեջանում 500, Ուզբեկստանում 600, Ղազախըստանում 1000 դեղակա պրոպագանդիստ: Ազրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի քաղկոմներին կից կազմակերպել կոմյերիտական պրոպագանդիստների յերեկոյան դպրոցներ՝ առանց արտադրութեանից կարելու սովորողներին:

Առաջարկել Ազրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի կոմյերիտմիութեան կենտկոմներին՝ մի ամսում ՀամԿՅՅՄ Կենտկոմի քննութեանն առաջարկներ ներկայացնել՝ կոմյերիտականների և յերիտասարդութեան համար 1938 թվականին տեղական ազգային լեզուներով քաղաքական ու գեղարվեստական գրականութեան հրատարակելու մասին: Անհրաժեշտ համարել Ազրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի կոմյերիտմիութեան կենտրոնական կոմիտեներին կից ստեղծել մանկական և պատանեկական գրականութեան հրատարակչութեանն:

2. Ազգային հանրապետութեանն յերիտական կազմակերպութեանն յատկապես ղենել կարեւորագույն խնդիր՝ բարելավել սկզբնական կոմյերիտական կազմակերպութեանն յաշխատանքը, մանավանդ ղչլաղներում և աուլներում, դարձնել դրանք խորհրդային առաջավոր յերիտասարդութեան մարտական մասսայական կազմակերպութեանն: Անհրաժեշտ է սխտեմատիկաբար դումարել կոմյերիտմիութեան սկզբնական կազմակերպութեանն ժողովներ, ժողովների որակարգի մեջ ղենել իրենց կոմյերիտականներին հետաքրքրող հարցեր, մանակից դարձնել ՀամԿՅՅՄ-ի յուրաքանչյուր անդամին սկզբնական կազմակերպութեան աշխատանքի հարցերի քննարկմանը և լուծմանը: Կանոնավոր կերպով գումարել կոմյերիտմիութեան ղրջկոմների ու քաղկոմների պլենումները, քաղաքային և ղրջնային ախտիվի ժողովները, վերտեղ նախ և առաջ քննարկել կոմյերիտմիութեան սկզբնական կազմակերպութեանն յաշխատանքը կազմակերպու-

րեն-քաղաքականորեն ամբացնելու հարցերը, արտամիութեանական յերիտասարդութեան մեջ կատարվող քաղաքական աշխատանքը բարելավելու և քաղաքի, ղչլաղների ու աուլների առաջավոր յերիտասարդութեան լայն խավերին կոմյերիտմիութեան ղարքերը ներգրավելու հարցերը:

3. Պարտավորեցնել կոմյերիտմիութեան յուրաքանչյուր գեկավար աշխատողին՝ վերջ տալ իր քաղաքական մակարդակի բարձրագմանը ցույց տված անհուգ վերաբերմունքին և ձեռնամուխ լինել լուրջ ուսման: Հանձնարարել ազգային հանրապետութեանն յերիտմիութեան կենտկոմներին ու մարզկոմներին՝ հսկողութեան կազմակերպել կոմյերիտական ախտիվի ուսման նկատմամբ, վճարար մերկացնելով այն ախտիվիստներին, վերտեղ ուսման մասին ղաղակրատելով, իրենք ղեն սովորում, այդ դործում որինակ ղեն տալիս բոլոր կոմյերիտականներին: Անհրաժեշտ է կոմյերիտական աշխատողներին պահանջել որինակելի վարքագիծ՝ հիմնված բուլլեիլյան սկզբունքայնութեան, աշխատանքի սխալների ու թերութեանն յերիտմիութեանն յերիտասարդութեան վրա: Կոմյերիտմիութեան գեկավար աշխատողները ղպետք է պարփակվեն կոմիտեյի անդամների նեղ ղրջնակում, այլ պետք է սերտորեն կապված լինեն կոմյերիտականների ու յերիտասարդութեան հետ, պարտավոր են պրոպագանդիստական, քաղաքական աշխատանք կատարել նրա մեջ:

4. Դատապարտելով կոմյերիտական ախտիվում նկատվող նեխված հաչտիվականութեանը գեպի նահապետական-ճորտատիրական մնացուկների փաստերը, մանավանդ աղջիկներին և կանանց նկատմամբ, պլենումը պարտավորեցնում է աղաքային հանրապետութեանն յերիտմիութեանն ու մարզերի կոմյերիտական կազմակերպութեանն յերիտմիութեանն յերիտականներին և յերիտասարդութեանն ժողովներում իսատ քննադատութեան յենթարկել աղջիկներին և կանանց նկատմամբ ճորտատիրական վերաբերմունքի կոնկրետ կրողներին, աշխատելով յուրաքանչյուր առանձին գեպում հասարակական և դատական ամենախիստ պատասխանատվութեան յենթարկել տալ մեղավորներին: Անհրաժեշտ է յերիտասարդութեան մեջ դաստիարակել հարգանքի և ընկերական վերաբերմունքի ղղացմունք գեպի կինն ու աղջիկը և ղհանդուրժող վերաբերմունք՝ խորհրդային բարոյականութեան ու կանանց իրավունքները պահպանող խորհրդային որենքների իսխտման կոնկրետ փաստերի նկատմամբ: Հանձնարարել Ազրբեջանի, Ղազախստանի

և Ուզբեկստանի կոմյերիտմիութեան կենտրոնական կոմիտեներին՝ առաջարկութեան ներկայացնել իրենց հանրապետութեան ներքի կառավարութեաններին, վոր մտցվեն հանրապետութեան ներքի ու մարդերի դատախազները հատուկ ողնականներ կանանցից՝ կանանց իրավունքների պաշտպանութեան գործերի համար:

5. Առաջարկել ազգային հանրապետութեանները և մարդերի կոմյերիտմիութեան կենտկոմներին, հողային և խորհրդային որդանների հետ միասին, կուրսերի լայն ցանց ծավալել՝ յերիտասարդ կանանցից կազմեր պատրաստելու խորհրդային, տնտեսական և կուլտուրական-քաղաքական աշխատանքի գանազան բնագավառների համար (տրակտորիստների, դատական աշխատողների, կոլտնակային բրիգադիւրների, խորհրդային որդաններում աշխատողների կուրսեր և այլն): Պարտաւորեցնել Ազգրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի կոմյերիտմիութեան կենտկոմներին՝ ուժեղացնել աղջիկների առաջաշումը կոմյերիտական ղեկավար աշխատանքի, մասնավորապէս շրջկոմների քարտուղարի աշխատանքի: Այլ նպատակով կազմակերպել կոմյերիտուհիների ուսուցման կուրսեր՝ Ղազախստանում 500 հոգու, Ազգրբեջանում 50 հոգու և Ուզբեկստանում 75 հոգու համար: Առանց սպասելու կոմյերիտմիութեան ղեկավար որդանների առաջիկա նոր ընտրութեաններին, ընտրել, վորպէս սկզբնական կազմակերպութեանների քարտուղարների տեղակալներ, աղջիկներին, իսկ առանձին շրջկոմներում, գոյութեան ունեցող հաստիքի սահմաններում, սահմանել շրջկոմների քարտուղարների ողնականներ՝ աղջիկների մեջ կատարվող աշխատանքի դժով:

1938 թվականին ազգային բոլոր հանրապետութեաններում և մարդերում գումարել կին յերիտասարդութեան համագումարներ ու կոնֆերանսներ, վորտեղ զննարկել յերիտասարդ կանանց մեջ աշխատանք կատարելու և կանանց նկատմամբ ճորտատիրական մնացուկների դեմ պայքարելու հարցերը:

6. Բարելավել գոյութեան ունեցող գյուղական կուլտուրական-լուսավորական հիմնարկների աշխատանքը (ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ, կարմիր յուրտեր, թեյասեր և այլն), մաքրութեան և կարգ ու կանոն հաստատել նրանց մեջ, միջոցներ ձեռք առնել սխտեմատիկ ստանալու թերթեր ու ժուռնալներ, ունենալ գրադարան, — շրջիկ գրադարաններ: Կազմակերպել նրանցում գանազան ինքնագործ խմբակներ՝ Փիղկուլտուրա-

յին, պաշտպանական, դրամատիկական, յերափշտական, ազրոտեխնիկական, ինչպէս և կազմակերպել դասախոսութեաններ, դրույցներ՝ սոցիալիստական շինարարութեան գանազան հարցերի շուրջը: Հասարակական-քաղաքական աշխատանքին յերիտասարդ կանանց ավելի ակտիվ ներգրավելու համար, մասնավորապէս ուսուցանելու ու զլլաղներում, նպատակահարմար համարել կանանց գանազան ակումբների, կարմիր անկոմներին, դպրոցների ու խմբակների ստեղծումը:

7. Պարտաւորեցնել Ազգրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի կոմյերիտմիութեան կենտկոմներին՝ ըստ ամենայնի ողնութեան ցույց տալ խորհրդային որդաններին՝ իրագործելու ընդհանուր տարրական ուսուցումը, բարելավելու ուսումնական-դաստիարակչական ամբողջ աշխատանքը դպրոցներում: Ազգային հանրապետութեաններին և մարդերի կոմյերիտական կազմակերպութեաններին ամենապլյավոր խնդիրն է՝ ողնել ժողովրդական կրթութեան որդաններին ուսուցիչներ պատրաստելու գործում: Առաջարկել Ազգրբեջանի, Ուզբեկստանի և Ղազախստանի կոմյերիտմիութեան կենտկոմներին՝ առաջարկութեան ներկայացնել միութենական հանրապետութեաններին կառավարութեաններին՝ կոմյերիտմիութեան լավագույն մասից ուսուցիչներ պատրաստելու մասին: Ամբացնել կոմյերիտական և պիտներական կազմակերպութեանները դպրոցներում, ապահովել համապատասխան հրահանգումն նրանց աշխատանքում և յուրաքանչյուր պիտներական ջոկատի համար ընտրել պատրաստված ջոկատավար:

8. Պարտաւորեցնել ազգային հանրապետութեաններին և կոմյերիտմիութեան շրջկոմներին՝ կազմակերպել ուսուց լեզուն ուսումնասիրելու անհրաժեշտութեան լայն պարզարանումը կոմյերիտականներին ու յերիտասարդութեանը, աշխատանք ծավալել՝ ձեռնարկութեաններում, կուլտուրականութեաններում, ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում ուսուց լեզվի ուսումնասիրման խմբակներ և կուրսեր ստեղծելու ուղղութեամբ:

ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի պլենումը ազգային հանրապետութեանների և մարդերի կոմյերիտական կազմակերպութեանների հատուկ ուղղութեանն է հրավիրում դպրոցներում, տեխնիկումներում և բուհերում ուսուց լեզվի դասավանդման ամբողջ գործը բարելավելու վրա: Հանձնարարել Ազգրբեջանի, Ղազախստանի և Ուզբեկստանի կոմյերիտմիութեան կենտկոմներին՝

լուծող կոմսաների հետ միասին, միջոցներ ձեռք ստանել բարե-
լավելու սուսայ լեզվի զասատունները պատրաստումը ազգային
զպրոցները համար:

9. ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի պլենումը պարտավորեցնում է
ազգային հանրագեաություններին ու մարզերի կոմյերիտական
կազմակերպություններին՝ յետանդազին շարունակել կոմյերիտ-
միության շարքերի մաքրումը արոցկիստական-բուխարինական,
բուրժուական-նացիոնալիստական լրտեսներից ու միասարարնե-
րից, կարյերիստներից, կոմյերիտականների քննադատությանն
ունկնդրել չցանկացող մարզկանցից: Ապահովել սկզբնական և
չբժանային կազմակերպություններից նոր աշխատողների համար-
ձակ և վճռական առաջընթացումը կոմյերիտմիության ղեկավար աշ-
խատանքներում:

10. Հանձնարարել Կենտկոմի Բյուրոյին՝ յերեք ամսից ստու-
գել ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի պլենումի սույն վորոշման կատա-
րումը:

ՀԱՄԼԿՅԵՄ-Ի ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՍԱՐՈՒՄՆԵՐ ԿՍԱՐԵԼԻՄ
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՍԱՐԱԾ
ՍԽԱՆԵՐԻ, ՀԱՄԼԿՅԵՄ-ԻՅ ՎՍԱՐՎԱԾՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՅՈՒՅՅ ՏՐՎԱԾ ԶԵՎԱԿԱՆ-ԲՅՈՒՐՈԿՐԱՏԱԿԱՆ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԲԻ ՅԵՎ ԱՅԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հունվարյան պլենումի «Կուսակցու-
թյունից կոմունիստներին վտարելիս կուսկազմակերպություննե-
րի կատարած սխալների, ՀամԿ(բ)Կ-ից վտարվածների բողոքնե-
րի նկատմամբ ցույց արված ձեռնարկ-բյուրոկրատական վերա-
բերմունքի և այլ թերությունները վերացնելու միջոցները մա-
սին» վորոշումը ամբողջովին վերաբերում է նաև լենինյան կոմ-
յերիտմիության կազմակերպություններին:

Ընկեր Ստալինը բազմիցս կոմյերիտական կազմակերպություն-
ների և ՀամԼԿՅԵՄ-ի ղեկավարների ուչազրությունն է հրավի-
րել, վոր անհրաժեշտ է ուչազիր, զգայուն և անհատական մոտե-
ցում ցուցարբերել ՀամԼԿՅԵՄ-ի անդամներին, առանձնապես
ՀամԼԿՅԵՄ-ի շարքերից կոմյերիտականներին վտարելու հար-
ցերը վորոշելիս:

Յերնելով ընկեր Ստալինի այլ ցուցումներից, ՀամԼԿՅԵՄ-ի
Կենտկոմը կոմյերիտական բոլոր կազմակերպություններից բազ-
միցս պահանջել է վերացնել անհոգի, վոչ-զգայուն, ձեռնարկ-
բյուրոկրատական մոտեցումը ղեպի կոմյերիտականները:

ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի պլենումը 1937 թվականի մայիսի
5-ին մասնանշեց, վոր՝

«Լենինյան կոմյերիտմիության ամբողջ աշխատանքը
հետապնդում է մի նպատակ՝ զաստիարակել յերիտասարդ-
ներին կոմունիզմի վողով, կոմունիստական կուսակցու-
թյան և նրա ստալինյան Կենտրոնական Կոմիտեյին նվիր-
վածության վողով: Կոմյերիտմիության մեջ, ավելի քան
մի վորևե այլ հասարակական կազմակերպության մեջ,
պետք է ամենազգայուն, ամենաուչազիր ու հոգատար ըն-
կերական մոտեցում ցուցարբրվի մարզկանց, ընդվորում

վոչ թե առհասարակ մարդկանց, այլ յուրաքանչյուր առանձին յերիտասարդ մարդու: Առանց դրան խոսք անգամ չի կարող լինել վորև զաստիարակութեան մասին:

Իսկ կոմյերիտական շատ ղեկավարներ մոռացել են դաստիարակութեան այդ գլխավոր պայմանը և վորպես տույժի միջոց, կիրառում են միմիայն ծայրահեղ միջոցը՝ վտարումը: Նրանց համար վոչինչ չարժե, առանց դործի մեջ խորանայու, առանց այս կամ այն կոմյերիտականի հետ դրույց ունենայու, վտարել նրան կոմյերիտմիությունից, յերբեմն ել նույնիսկ նրա բացակայութեամբ տույժի յենթարկել նրան, յերբեմն դարձյալ նրա բացակայութեամբ: Կոմյերիտմիութեան միջանի ղեկավարներ յերեւի կարծում են, թե քանի վոր կոմյերիտմիությունը բազմամիլիոն կազմակերպություն է, ապա վոչինչ չի պատահի, յեթե նրա շարքերից վտարվեն մեկ-յերկու հարյուր, իսկ յերբեմն ել հազարավոր կոմյերիտականներ: Յերիտասարդ մարդկանց բախտին այդորինակ մոտեցում ցույց տալը հակասում է կոմյերիտմիութեան, վորպես դաստիարակող կազմակերպութեան, ամբողջ եյությանը և հանդիսանում է վնասակար, վոչ-բոլշևիկյան մոտեցում»:

31937 թվականի մայիսի 23-ի վորոշման մեջ արձանագրել է՝

«Առաջարկել կոմյերիտմիութեան սկզբնական կազմակերպություններին, շրջկոմներին, մարզկոմներին, յերկըրկոմներին և ազգային հանրապետությունների կենտկոմներին՝ մինչև 1937 թվականի հոկտեմբերի 15-ը վերանայել իրենց վորոշումները բոլոր նրանց մասին, ովքեր վտարվել են կոմյերիտմիությունից 1936 թվականի ընթացքում և 1937 թվականի առաջին յետամոյակում միութենական և արտադրական կարգապահությունը խախտելու, միութենական պարտականությունները չկատարելու և կենցաղային զանցանքների պատճառաբանություններով, վերականգնել կոմյերիտմիութեան մեջ բոլոր նրանց, ովքեր վտարված են յեղել առանց բավականաչափ հիմքի:

Կոմյերիտմիությունից սխալ վտարվածների վերականգնումն սկսել սկզբնական կազմակերպություններից»:

1937 թվականի ոգոստոսին ՀամԿՅՅԵՄ-ի Կենտկոմը նորից

մատնանչեց, վոր անթույլատրելի յե կոմյերիտականներին ձեական, անհոգի մոտեցում ցուցարարել:

«Իստապարտել առանձին կոմյերիտականներին կոմյերիտմիությունից վտարելու կամ վերականգնելու հարցերը քննելիս դեպի նրանց բախտն անհոգի, ձեական մոտեցում ցուցարարելու գոյություն ունեցող պրակտիկան: Պարտավորեցնել կոմյերիտմիութեան կոմիտեներին՝ առավելագույն ընկերական ուշադրություն և պայուն վերաբերմունք ապահովել կոմյերիտմիությունից վտարելու կամ վերականգնելու հարցը վորոշելիս, մանրազնին պարզելով կոմյերիտականների կատարած զանցանքները՝ չսահմանափակվել ամբողջ գործը միայն հարցաթերթիկներն ու կենսադրական տվյալները ձեականորեն պարզելով, դնահատել կոմյերիտականներին ամենից առաջ ըստ եյության, այսինքն, ըստ քաղաքական և գործարար հատկությունների, ըստ նրանց նվիրվածութեան ժողովրդին, կոմունիստական կուսակցութեանը, խորհրդային իշխանութեանը»: (ՀամԿՅՅԵՄ-ի Կենտկոմի Ա-րդ պլենումի վորոշումից):

Չնայած կուսակցութեան ցուցումներին և ՀամԿՅՅԵՄ-ի Կենտկոմի վորոշումներին, կոմյերիտական կազմակերպությունները, ՀամԿՅՅԵՄ-ի շարքերը Փաշիգմի տրոցկիստական-բուխարինական գործակալներից մաքրելու աշխատանքը կատարելիս, թույլ են տվել յուրջ սխալներ և խեղաթյուրումներ, վորոնք խանգարում են յենինյան կոմյերիտմիությունը հետապայում և ժողովրդի թշնամիներից՝ տրոցկիստական-բուխարինական լըրտեսներից ու վնասարարներից, մաքրելուն:

Քիչ փաստեր չկան, յերբ կոմյերիտական կազմակերպություններն անխտիր, առանց ստուգման, անհիմն կերպով ՀամԿՅՅԵՄ-ի շարքերից վտարել են ազնիվ, կոմունիստական կուսակցութեանը և խորհրդային իշխանութեանը նվիրված կոմյերիտականներին, աշխատում են հանել նրանց աշխատանքից և վտարել ուսումնական հաստատություններից: Յերբեմն աղնիվ կոմյերիտականներին հայտարարում են ժողովրդի թշնամիներ և թշնամիների գործակիցներ, առանց դրա համար հիմք ունենայու:

Վտարվածներին առանց վորևե հիմքի «թշնամական տարրեր» կամ «ժողովրդի թշնամիների գործակիցներ» հայտարարելով,

կոմյերիտմիությունից մասսայական վտարումներ կատարելու կողմից, առանձնապես անբարեհաջող կազմակերպություններ են Յարոսլավլի, վրացական, Կուբսկի և Ոմսկի կազմակերպությունները:

Յարոսլավլի մարզային կազմակերպության մեջ 1937 թվականին կոմյերիտմիությունից վտարվել է 969 հոգի, վորպես «թշնամական տարրեր», «յերկերեսանիներ» և «ժողովրդի թըշնամիները հետ կապվածներ», ընդվորում, ինչպես ստուգումից պարզվեց, այդ վտարումները մեծ մասը սխալ է յեղել: Յարոսլավլի մարզի Ռիբինսկի կոմյերիտմիության քաղկոմը ՀամԼԿՅՅՄ-ի շարքերից վտարել է ընկեր Սմարչկովին «ժողովրդի թշնամիները հետ կապ ունենալու համար»: Այդ վորոշումը ստուգելիս պարզվեց, վոր ժողովրդի թշնամիները հետ կոմյերիտական Սմարչկովի ունեցած այդ «կապը» այն է յեղել, վոր նրա տատը դայակ է յեղել վոմն Տիտովայի մոտ, վորը հակախորհըրդային աշխատանք է կատարել:

Ոմսկի մարզի ՀամԼԿՅՅՄ Գուլիշմանովսկի ուսյկոմը կոմյերիտմիությունից վտարել է ընկերներ Կոստենկոյին ու Պոչխայսկին «ժողովրդի թշնամի Կոմեյնիկովի հետ կապ ունենալու համար»: Նույն պատճառարանությամբ էլ նրանք հանվեցին աշխատանքից: Այդ ամբողջ գործի քննությունից պարզվեց, վոր Կոմեյնիկովը, վորպես ժողովրդի թշնամի, մերկացվել է հենց ընկերներ Պոչխայսկի և Կոստենկոյի մատերիալների հիման վրա:

Մոսկվա քաղաքի ՀամԼԿՅՅՄ-ի Լենինյան ուսյկոմը կոմյերիտմիությունից վտարել է Մոսկվայի Տեքստիլ ինստիտուտի ուսանող ընկ. Կ. Պոզգորնուն, ձևակերպելով «վորպես չգինաթափված արոցկիստ»: Ստուգման ժամանակ պարզվեց ընկ. Պոզգորնուն այդպիսի վտարման կատարելապես անհիմն լինելը: Ընկ. Պոզգորնին գիմել է ՀամԼԿՅՅՄ-ի Մոսկվայի մարզկոմի կոմյերիտմիության մեջ ընդունող և հեռացնող հանձնաժողովին, բողոքելով կոմյերիտմիության Լենինյան ուսյկոմի սխալ գործողության դեմ: Սակայն ընկ. Պոզգորնուն բողոքը հանձնաժողովում մնացել է 1937 թվականի մայիսից մինչև 1938 թվականի հունվարը, առանց քննվելու:

Կոմյերիտական շատ կազմակերպություններ, փոխանակ կոմյերիտականներին պարզաբանելու նրանց համար անհասկանալի հարցերը, նրանց վտարում են կոմյերիտմիությունից վորպես

«քաղաքականապես անբարեհաջողներ», վորպես «ժողովրդի թըշնամիներ»:

Այսպես, որինակ, Կուբսկի մարզի ՀամԼԿՅՅՄ-ի Շչիգրովսկի շրջկոմը փոխանակ կոմյերիտական ընկ. Բակուլինին պարզաբանելու մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցը, նրան վտարել է կոմյերիտմիությունից: Բակուլինի հետ կապ ունենալու համար շրջկոմը վտարել է ևս 7 հոգու, վորոնց թվում ընկ. Կաչչենկոյին և ընկ. Գուլենիչչեվին: Նրանք վտարվել էին վորպես «արոցկիստական թափթփուկ Բակուլինի թունդ պաշտպաններ» և զրկվել էին տեխնիկումում դիալոմ պաշտպանելու իրավունքից, իսկ ուսանող կոմյերիտուհի ընկ. Գալչինան նույն պատճառով վտարվել է կոմյերիտմիությունից և պրոֆմիութենական կազմակերպությունից: ՀամԼԿՅՅՄ-ի Կուբսկի մարզկոմը հաստատեց այդ վորոշումները և դրա հետ միասին կոմյերիտմիությունից վտարեց ու աշխատանքից հանեց ՀամԼԿՅՅՄ-ի Շչիգրովսկի շրջկոմի քարտուքար ընկ. Ալեքսեյեվին այն բանի համար, վոր նա կոմյերիտմիությունից «ուշացումով» էր վտարել ընկ. Բակուլինին: Ընկ. Բակուլինը, վորպես սխալ վտարված, կոմյերիտմիության մեջ վերականգնվեց ՀամԼԿՅՅՄ-ի Կենտրոնական Կոմիտեյի կողմից:

ՀամԼԿՅՅՄ-ի Կուբսկի մարզկոմն աշխատանքից հանեց ՀամԼԿՅՅՄ-ի Մանուսկովսկի շրջկոմի պրոպագանդիստ ընկ. Իվանովին, վորպես «արոցկիստ» և հարց դրեց նրան կոմյերիտմիությունից վտարելու մասին այն բանի համար, վոր ընկ. Իվանովը, կոմյերիտմիության Կուբսկի մարզկոմի առաջին քարտուղար ընկ. Ուրոժենկոյի հետ վիճելիս, առարկել էր մի յերկրում սոցիալիզմի վերջնական հաղթանակի հարցի մասին նրա արտահայտած սխալ հայացքների դեմ: Ընկ. Ուրոժենկոն, ինքը չհասկանալով այդ հարցը, փորձում էր ընկ. Իվանովին շեղել նրա ճիշտ հայացքներից և վարվեց Չեխովի ունտեր Պրիշիբեյսկի նման՝ ընկ. Իվանովին հանեց պրոպագանդիստական աշխատանքից, վորպես «արոցկիստ»:

Ընկեր Ստալինը ընկ. Իվանովի նամակին տված իր պատասխանի մեջ գրում է.

«Ձեր նամակից յերևում է, վոր ընկ. Ուրոժենկոն ունի այլ, վոչ բոլորովին լենինյան հայացքներ: Նա, բանից դուրս է դալիս, պնդում է, վոր «մենք այժմ ունենք սոցիալիզմի վերջնական հաղթանակը և ունենք լիակատար

ասպահովութիւնն ինտերվենցիայի ու կապիտալիզմի ուս-
տավարացիայից»։ Տարակույս չի կարող լինել, վոր ընկ-
Ուրոժենկոն արմատապես սխալ է։ Ընկ. Ուրոժենկոյի
այդպիսի պնդումը կարող է բացատրվել միմիայն շրջա-
պատող իրականութիւնը չըմբռնելով և լենինիզմի տար-
րական դրույթները չիմանալով, կամ թե դոկտրինայի յե-
րիասարգ չիմուլնիկի դասարկ պարծենկոտութեամբ»
(Ի. Ստալին)։

Կոմյերիտմիութեան ղեկավարները պետք է վճարար վե-
րացնեն ղեկավարման մեջ դոյութիւնն ունեցող ունտեր-պրիշի-
բեյեյան մեթոդները, վորոնք խոր մնաս են հասցնում յերիտա-
սարդութեան կոմունիստական դաստիարակութեան ամբողջ դոր-
ծին և խախտառկում են լենինյան կոմյերիտմիութեանը, պետք
է կոմյերիտմիութեանից դուրս քշեն ամենամիասակար տրամա-
դրութիւնները, պոռոտախոսութիւնը, կապիտալիստական շրջ-
ձագատման վտանգի մոռացումը, և միշտ պարտաւոր են հիշել,
վոր լենինյան կոմյերիտմիութիւնը հանդիսանում է յերիտասար-
դութեան դաստիարակման մարտական կազմակերպութիւնը՝ հա-
նուն կոմունիզմի մղվելիք վերահաս մարտերի։

ՀամԿՅՅՄ-ի շարքերից կատարված անհիմն վտարումների
հետ միասին, հաճախ, կոմյերիտմիութեան կոմիտեներին և ա-
ռանձին ղեկավար աշխատողների առաջարկութեամբ, կոմյերիտ-
միութիւնից վտարվածներին հանում են աշխատանքից։

ՀամԿՅՅՄ-ի Սմոլենսկի մարզի Տեմկինսկի շրջկոմը կոմյե-
րիտմիութիւնից վտարեց, իրը թե ժողովրդի թշնամու հետ կապ
ունենալու համար, ուսուցիչ ընկ. Կրուպենինին և նրան հանել
տվեց մանկավարժական աշխատանքից։ Ստուգումից պարզվեց,
վոր Կորոլյովը, վորի հետ կապ ունենալու մեջ մեղադրվում էր
ընկ. Կրուպենինը, դատի տակ է յեղել, բայց հետագայում
արդարացվել է։ Այնուամենայնիվ ընկ. Կրուպենինը յերեք ամիս
անգործ մնաց։ Միայն ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմի միջամտութեա-
նից հետո նա վերականգնվեց կոմյերիտմիութեան մեջ և դրպ-
րոցական աշխատանքում։

Կոմյերիտմիութեան Իվանովսկի մարզի Ալեքսանդրովյան շրջ-
կոմը ՀամԿՅՅՄ-ի շարքերից վտարեց և աշխատանքից հանել
տվեց ուսուցիչ ընկ. ՈՖիցերովին, վորպես «արոցկիստի»։
Մարզկոմը ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմին հաղորդեց, վոր ՈՖիցերովը
ձերբակալված է ՆԳՏԿ որդանների կողմից։ Ստուգելիս հաստատ-

վեց, վոր ընկ. ՈՖիցերովին առաջադրված մեղադրանքները զըր-
պարաշահան են յեղել, վոր նա յերեք չի ձերբակալվել։ Համ-
ԿՅՅՄ-ի Կենտկոմի միջամտութեանից հետո ընկ. ՈՖիցերովը
նույնպես վերականգնվեց կոմյերիտմիութեան մեջ և դպրոցա-
կան աշխատանքներում։

Ընդհանուր մտտեցում ցուցաբերելով ՀամԿՅՅՄ-ից վտա-
րումներ կատարելու գործին, միջանի կոմյերիտական կազմա-
կերպութիւններ բանը հասցնում են այնտեղ, վոր սկսում են
պիտներական կազմակերպութիւնները վտարել յերեխաներին և
աշխատում են նրանց հեռացնել տալ դպրոցներից, պատճառաբա-
նելով, թե նրանք կապ ունեն ժողովրդի թշնամիներին հետ։

Լենինդրազի և Մոսկվայի մարզերի ՀամԿՅՅՄ-ի մի շարք
կազմակերպութիւններում գործը հասել էր այնտեղ, վոր կոմ-
յերիտական ղեկավարների և պիտներական ջոկվարներին աչքի
ստչե գործում էր թշնամական պրոպոկացիան, թե պիտներական
փողկապի սեղմիչի վրա իբր թե հակահեղափոխական նշաններ
կան։ Կոմյերիտական շատ ղեկավարներ, այդ պրոպոկացիան
հակահարված տալու փոխարեն, աղահավաքվելով, իրենք էլին
ստիպում պիտներներին հանել պիտներական փողկապներից սեղ-
միչները, իսկ այն յերեխաներին, վորոնք չէին ուզում հանել,
պատժում էլին, առանձին դեպքերում նույնիսկ վտարում էլին
պիտներական կազմակերպութիւնից։

ՀամԿՅՅՄ-ից կոմյերիտական ուսանողներին սխալ կերպով
վտարելու և կոմյերիտական կազմակերպութիւնների պահան-
ջով նրանց ուսումից հանելու շատ փաստեր կան։

Խմբկով քաղաքի լրագրական տեխնիկումի ՀամԿՅՅՄ-ի կո-
միտեն կոմյերիտմիութիւնից վտարել է ընկ. Շուլթենկոյին՝
«ժողովրդի թշնամու հետ կապ ունենալու համար» և կարողա-
ցել է դիբեկցիայի միջոցով նրան հեռացնել տեխնիկումից։
Ստուգմամբ հաստատվել է, վոր ընկ. Շուլթենկոն ժողովրդի
թշնամու հետ վոչ մի կապ չի ունեցել։ ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմի
միջամտութեանից հետո ընկ. Շուլթենկոն վերականգնվեց կոմ-
յերիտմիութեան մեջ և տեխնիկումում։

Թրիլիսիի բժշկական ինստիտուտի կոմյերիտական կազմա-
կերպութիւնը կոմյերիտմիութիւնից վտարել է ընկ. Մեդրեչկի-
լուն և կարողացել է դիբեկցիայի միջոցով հեռացնել նրան
ինստիտուտից։ Նրա հարցը ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմում վորոշե-
լու ժամանակ չհաստատվեցին ներկայացված մեղադրանքները և

ընկ. Մեզրեչվիին, առանց վորեւ տույժի, վերականգնվեց կոմ-
յերիամիութեան մեջ:

Ինչո՞վ բացատրել այս և սրանց նման փաստերը:

Ամենից առաջ նրանով, վոր ՀամԼԿՅՅՄ-ի ղեկավար աշխա-
տողների մեջ կան կարգերիտաներ, վորոնք ձգտում են, կոմյե-
րիամիութեանից վտարումներ կատարելով, աչքի ընկնել և ա-
պահովագրվել զգաստութեան պակասութեան հնարավոր մեղա-
դրանքներից: Այդպիսի կարգերիտաները կարծում են, վոր յեթե
կոմյերիտականի վրա հայտարարութեան և տրված, թեկուզ և
սխալ հայտարարութեան, պետք է վորքան կարելի յե չուտ ա-
զատվել նրանից և դրանով իսկ ապահովագրել իրենց՝ զգաստու-
թեան պակասութեան համար մեղադրվելուց: Այդ կարգերիտանե-
րը, վորպէսզի իրենք զգաստ յերեւան, պատրաստ են յուրաքան-
չյուր առիթով կոմյերիտականներին վտարել ՀամԼԿՅՅՄ-ի շար-
քերից:

Ավերելով մարզի ՀամԼԿՅՅՄ-ի Յեգորչինսկի շրջկոմի քար-
տուղար ընկ. Կոստարեվը, ներկա գտնվելով կոմյերիտիութեան
ժողովում կոմյերիտական Կրասիլնիկովի հարցը քննելիս, հայ-
տարարել է՝ «Մեր ի՞նչ բանն է գրադվել և նյութերը ստուգել,
կուղարկենք մարզկոմ, այնտեղ կպարզեն. յեթե չափն անցած լի-
նենք, կուզգեն: Պետք է վտարել»:

Ժողովրդի դեռևս չմերկացված թշնամիները և նրանց դուր-
ձակիցները պրոփոկացիոն նպատակներով կոմյերիտիութեան մեջ
կազմակերպում են զրպարտիչ հայտարարութեաններ տալը և
ազադակում են զգաստութեան մասին նրա համար, վոր հարվա-
ծը հեռացնեն իրենցից, վորպէսզի թշնամական նպատակներով
արատավորեն կոմյերիտիութեան ազնիվ, կուսակցութեանն ու
խորհրդային իշխանութեանը նվիրված անդամներին:

ՀամԼԿՅՅՄ-ի Արխանգելսկի մարզկոմի նախկին քարտուղար
Կոթինը, այժմ ժողովրդի մերկացված թշնամին, դիտավորյալ
կերպով արատավորում էր ազնիվ կոմյերիտականներին, «Թշնա-
միների» և «յերկերեսանիների» պիտակներ կպցնելով նրանց:

Ճիշտ նույնպիսի ստոր պրոփոկացիոն աշխատանք էր կատա-
րում ժողովրդի թշնամի Պետուխովը ՀամԼԿՅՅՄ-ի Արխանգելսկի
մարզկոմում:

Իվանովոյի մարզի ՀամԼԿՅՅՄ-ի Յուրյեյ-Պուլսկի շրջկոմի
նախկին քա. տուղար, այժմ ժողովրդի մերկացված թշնամի Մախ-
լովը մասսայական վտարումներ է կազմակերպել ՀամԼԿՅՅՄ-ից,

մեղադրելով կոմյերիտականներին «ժշնամական գործողութեան-
ներին», «սարտաժի համար», իսկ ժողովրդի խնայական թշնամի-
ներին և բարոյապես քայքայվածներին վերցնելիս և յեղել իր
պաշտպանութեան տակ:

Ժողովրդի դիմակավորված թշնամիներն ամեն կերպ աշխա-
տում են կոմյերիտական կազմակերպութեաններում անպատահու-
թեան և ավելորդ կասկածամտութեան մթնոլորտ ստեղծել, վոր-
ի ժամանակ յուրաքանչյուրին, ով հանդես է դալիս վորեւ
մեկի կողմից արատավորված կոմյերիտականին պաշտպանելու,
իսկույն մեղադրում են ժողովրդի թշնամիների նկատմամբ հաշտ-
վողականութեան ցուցաբերելու, անհրաժեշտ զգաստութեան չու-
նենայու համար:

Միքանի կոմյերիտական ղեկավարներ, այդ թշնամական պրո-
փոկացիան մերկացնելու փոխարեն, հաճախ իրենք են յենթարկ-
վում թշնամիներին և, առանց պարզելու գործի ելութեանը,
ՀամԼԿՅՅՄ-ից վտարում են նվիրված ու ազնիվ կոմյերիտական-
ներին:

Ժամանակն է հասկանալու, վոր չհիմնավորված վտարում-
ները կոմյերիտիութեանից, անհոգի վերաբերմունքը դեպի մար-
դիկ, դեպի ՀամԼԿՅՅՄ-ի անդամները, ձեռնտու յեն ժողովրդի
թշնամիներին, վորովհետև այդպիսի հակարոյւնեկյան գործողու-
թեաններն ավելորդ կասկածամտութեան են սերմանում Համ.
ԼԿՅՅՄ-ի շարքերում, դժգոհութեան և զայրույթ են առաջ բե-
րում ՀամԼԿՅՅՄ-ից սխալ վտարվածների մեջ, իսկ Փաշիգոմի
տրոցկիստական-բուխարինական գործակալները հաճախ ճանկում
են այդպիսի դժգոհ և զայրացած ընկերներին և իրենց հետեից
տանում են նրանց դեպի թշնամական ճահիճը:

Կոմյերիտական շատ աշխատողներ քաղաքական յեզրակացու-
թեաններ չեն հանել ՀամԼԿՅՅՄ-ից անհիմն և սխալ վտարում-
ներ կատարելու փաստերից, չեն խորացել կոմյերիտականներից
ստացված բողոքների և դիմումների ելութեան մեջ, դիմումները
քննելու կարևորագույն աշխատանքը վերափոխանել են Համ.
ԼԿՅՅՄ-ի շարքերն ընդունող և հեռացնող հանձնաժողովներին:
Մինչդեռ ստուգումը ցույց տվեց, վոր այդ հանձնաժողովները
կտրված են յեղել կոմյերիտական ղեկավարութեանից և նրանց
մեջ բյուրոկրատիզմ ու քաղքուկ է տիրում: Հարյուրավոր բո-
ղոքներ ամիսներով չեն քննվում և, վորպէս կանոն, այդ հանձնա-
ժողովները մեխանիկորեն շտամպում են կոմյերիտիութեանից

հեռացնելու մասին ՀամԿՅՅՄ-ի շրջկոմների ընդունած վորո-
չումները: Կոմյերիտմիության Կուլյբիշևի մարզկոմում մինչև
այժմ չի քննվել 485 բողոք, կոմյերիտմիության Բելոռուսիայի
Կենտկոմում՝ 425, Ուզբեկստանի ԿՅՅՄ-ի Կենտկոմում՝ 401,
Վորոնեժի մարզկոմում՝ 358, Տամբովի մարզկոմում՝ 308 և
ՀամԿՅՅՄ-ի Ալտայի մարզկոմում՝ 332 բողոք:

Կոմյերիտմիությունից վտարելու հարցերը լուծելու, Համ-
ԿՅՅՄ-ից վտարվածների բողոքները քննելու գործում գոյու-
թյուն ունի անուշադիր, անհոգի մոտեցում: Կոմյերիտական շատ
կոմիտեներ չեն քննում կոմյերիտականի կատարած այս կամ այն
դանցանքի պատճառները և նրան անհապաղ վտարում են կոմյե-
րիտմիության շարքերից: Մի՞թե չի կարելի կոմյերիտականին
ՀամԿՅՅՄ-ի շարքերից վտարելուց առաջ նրան նախազգուշա-
ցում անել, յեթե այդ չի ազդում՝ նկատողություն անել, հան-
դիմանություն անել, ժամկետ տալ ուղղվելու համար: Դժբախ-
տաբար, նման վոչ մի բան չի արվում կոմյերիտական կազմա-
կերպություններում: ՀամԿՅՅՄ-ի կոմիտեների աշխատանքում
պահասում է ուշադիր վերաբերմունքը դեպի մարդիկ, դեպի
կոմյերիտականների բախտը:

Կոմյերիտմիությունից վտարելիս ՀամԿՅՅՄ-ի կազմակեր-
պությունների գործած կոպիտ սխալներն առաջ են դալիս նաև
նրանից, վոր կոմյերիտական շատ ղեկավարներ մոռանում են
կոմյերիտական կազմակերպությունների դաստիարակչական դե-
րը, իսկ նրանցից մոմանք, իրենց քաղաքական թույլ պատրաս-
տության պատճառով, դաստիարակչական աշխատանքը փոխա-
րինում են վարչարարական մեթոդներով, ազմկարարությամբ:
Այդ սխալները նաև վկայում են, վոր քննադատությունը և ինք-
նաքննադատությունն անբավարար է կոմյերիտական կազմակեր-
պություններում և կոմյերիտական վորոշ աշխատողներ կտրվել
են կոմյերիտական մասսաներից:

ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմի պլենումը կոմյերիտական բոլոր
կազմակերպություններից և նրանց ղեկավարներից պահանջում
է՝ ամեն կերպ բարձրացնել բուլշևիկյան զգաստությունը, այսու-
հետև ևս մերկացնել, արմատախիլ անել կոմյերիտմիության մեջ
մնացած՝ ժողովրդի դիմակավորված թշնամիներին և վերացնել
առանց մնացորդի ղեկավարման ունտերպրիշիբեյկյան այն մե-
թոդները, վորոնք ընկեր Ստալինը մասնացույց է արել կոմյերի-
տական ընկ. Իվանովին ուղղած իր նամակում:

ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմի պլենումը ՀամԿՅՅՄ-ի բոլոր կազ-
մակերպությունների կարևորագույն խնդիրն է համարում՝ ուղ-
ղել կոմյերիտմիությունից վտարումներ կատարելու ժամանակ
թույլ տրված կոպիտ սխալները, վերացնել ՀամԿՅՅՄ-ի անդամ-
ների նկատմամբ ցուցաբերվող անխտիր ընդհանուր մոտեցումը:

Բուլշևիկյան զգաստությունը, ինչպես սովորեցնում է կոմու-
նիստական կուսակցությունը, այն է, վոր կարողանանք մերկաց-
նել թշնամիներին, ինչպես էլ դիմակավորված լինեն նրանք, ինչ-
պես էլ ճարպիկ ու խորամանկ լինեն նրանք, և վոչ թե այն,
վոր առանց քննության, նեխված գերապահոյագրման նպատակ-
ներով, ՀամԿՅՅՄ-ի շարքերից հարյուրներով վտարենք կոմյե-
րիտականներին: Կոմյերիտմիության բոլոր կազմակերպությունները
պարտավոր են զգուշություն և ընկերական հոգաստարություն
ցուցաբերել կոմյերիտականներին ՀամԿՅՅՄ-ից հեռացնելու
կամ նրանց իրավունքները վերականգնելու հարցերը լուծելիս:

Ցենսելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հունվարյան պլենումի վորո-
չումներից, ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմի պլենումը պարտավորեցնում
է բոլոր կոմյերիտական կազմակերպություններին՝

1. Առանց մնացորդի վերացնել գոյություն ունեցող այն
պրակտիկան, ըստ վորի առանձին կոմյերիտականների բախտին
անհոգի, ձեռական մոտեցում է ցուցաբերվում կոմյերիտմիութ-
յունից նրանց վտարելու կամ վերականգնելու հարցերը քննելու
ժամանակ: Վճռականորեն վերջ տալ ՀամԿՅՅՄ-ի շարքերից
մասսայաբար, անհիմն կերպով վտարելուն:

Պարտավորեցնել կոմյերիտմիության բոլոր կոմիտեներին՝
անհապաղ կոմյերիտական փաստաթղթեր տալ կոմյերիտմիութ-
յան մեջ վերականգնվածներին և ներգրավել նրանց կոմյերի-
տական կազմակերպությունների աշխատանքին:

2. Ստիպ պատժել, մինչև իսկ կոմյերիտական ղեկավար
աշխատանքից հանել այն աշխատողներին, վորոնք անհիմն կեր-
պով վտարում են ՀամԿՅՅՄ-ից, թույլ են տալիս, վոր արա-
տավորվեն և ժողովրդի թշնամիներ շարքը դառնան ազնիվ ու
կոմունիզմի գործին նվիրված կոմյերիտականները:

3. Լուծարքի յեթարկել ՀամԿՅՅՄ-ի մարզկոմներին, յե-
րկրկոմներին և ազգային հանրապետությունների ԿՅՅՄ Կենտ-
կոմներին կից ՀամԿՅՅՄ-ի ընդունող և հեռացնող հանձնաժողով-
ները: Սահմանել, վոր կոմյերիտականներից ստացվող բողոքնե-
րի քննությունը պետք է անմիջականորեն կատարի մարզկոմի,

յերկրկումի և ազգային հանրապետութիւններէ ԼԿՅՅՄ կենտկումը բողոքարկողի ներկայութեամբ:

4. Պարտավորեցնել բոլոր սկզբնական և շրջանային կոմյերիտական կազմակերպութիւններին՝ ՀամԼԿՅՅՄ-ի շարքերից վաարելու և կոմյերիտական տույժեր տալու հարցերն անպայման քննել այն կոմյերիտականի ներկայութեամբ, վորի գանցանքը քննվում է: Կոմյերիտութիւնից վտարելու կամ կոմյերիտական տույժ տալու մասին սկզբնական կազմակերպութեան ընդունած յուրաքանչյուր վորոշումն անպայման հաստատվում է ՀամԼԿՅՅՄ-ի շրջկոմի կողմից՝ կոմյերիտականի ներկայութեամբ:

Բոլոր կոմյերիտականներին պարզաբանել, վոր կոմյերիտութիւնից վտարելու կամ տույժ տալու մասին ՀամԼԿՅՅՄ-ի շրջկոմներէ, քաղկոմներէ վորոշումներէ դեմ կոմյերիտականը կարող է բողոքարկել ԼԿՅՅՄ-ի մարդկումին, յերկրկումին և ազգային հանրապետութիւններէ կոմյերիտութեան կենտկումին՝ ընդհուպ մինչև ՀամԼԿՅՅՄ-ի կենտկումը:

5. Առաջարկել կոմյերիտութեան բոլոր մարդկումներին, յերկրկումներին և ազգային հանրապետութիւններէ ԼԿՅՅՄ-ի կենտկումներին՝ յերեք ամսվա ընթացքում քննել կոմիտեններում յեղած կոմյերիտականներէ բոլոր բողոքները:

6. Մահմանել, վոր կոմյերիտութեան կոմիտենները, վերականգնելով սխալմամբ վտարվածներէ ՀամԼԿՅՅՄ-ի անդամի իրավունքները, պարտավոր են իրենց վորոշումներում ճշտիվ մատնանշել, թե ՀամԼԿՅՅՄ-ի վոր շրջկոմը, քաղկոմը պետք է կոմյերիտական փաստաթղթեր տա կոմյերիտութեան մեջ վերականգնվածին:

7. Պարտավորեցնել կոմյերիտութեան բոլոր կազմակերպութիւններին՝ ՀամԼԿՅՅՄ-ի շարքերից վտարելու մասին իրենց կայացրած վորոշումներում ճշտիվ և պարզորոշ շարագրել վտարելու պատճառները, վորպեսզի վերագաս կազմակերպութիւնները կարողանան ստուգել այդ վորոշումներէ ճշտութիւնը:

8. Պարտավորեցնել ՀամԼԿՅՅՄ-ի կազմակերպութիւններին՝ պատասխանատվութեան կանչել այն անձերին, վորոնք մեղաւոր են կոմյերիտութեան այս կամ այն անդամին զրպարտելու համար, լիովին ռեարիտացիայի յենթարկել զրպարտված կոմյերիտականներին և ռեարիտացիային վերաբերող վորոշումները հրապարակել մամուլում այն դեպքում, յերբ այդ կոմյերիտականին վարկաբեկող նյութերն առաջ հրապարակվել են:

9. Պարտավորեցնել ՀամԼԿՅՅՄ-ի մարդկումներին, յերկրկումներին և ազգային հանրապետութիւններէ ԼԿՅՅՄ-ի կենտկումներին՝ համապատասխան խորհրդային և տնտեսական մարմիններէ միջոցով ազահովել կոմյերիտութիւնից վտարելու կապակցութեամբ հանվածներին աշխատանքում տեղաւորելը և ուսման մեջ վերականգնելը:

ՀԱՄԼԿՅԵՄ-Ի ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՁ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԳՈՐԾԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՅՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

I

Խորհրդային իշխանության գոյության տարիներին Լենինի—
Մտալինի կուսակցությունը միլիոնավոր յերիտասարդներին դաս-
տիարակեց կոմունիզմի վոգոյ: Խորհրդային հասարակակարգը
յերիտասարդությանը լիակատար հնարավորություն տվեց մաս-
նակցելու յերկրի հասարակական—քաղաքական և տնտեսական
կյանքին: Յերիտասարդների և աղջիկների հսկայական մասսաներ
աշխատում են սոցիալիստական շինարարության տարբեր բնա-
ղավառներում: Յերիտասարդությունն իր նվիրվածությունը
ՀամԿ(բ)Կ-ին ու խորհրդային իշխանությանը, իր հարաճուն քա-
ղաքական ակտիվությունն առանձնապես ուժգին ցույց տվեց
ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամա-
նակ: Խորհրդային դպրոցներում միլիոնավոր յերեխաներ դաստիա-
րակվում են կոմունիզմի վոգոյ, և նրանցից շատերը, պատանե-
կական հասակին հասնելուց առաջ, մասնակցում են պիոներական
կազմակերպությունների աշխատանքին: Այդպիսով, լենինյան
կոմյերիտմիությունը լիակատար հնարավորություն ունի սիս-
տեմատիկաբար իր շարքերը ներգրավելու խորհրդային առաջա-
վոր յերիտասարդության լայն մասսաներին:

ՀամԿՅԵՄ-ի տասերորդ համագումարը կոմյերիտական բո-
լոր կազմակերպություններից պահանջեց բարելավել խորհրդային
առաջավոր յերիտասարդությանը կոմյերիտմիության շարքերն ըն-
դունելու բնագավառում ՀամԿՅԵՄ-ի կատարած ամբողջ աշխա-
տանքը: Չնայած 10-րդ համագումարի այդ դիրեկտիվին, Համ.
ԿՅԵՄ-ի շարքերը մտնելու այն հսկայական ձգտման, վոր ցու-
ցաբերում է առաջավոր յերիտասարդությունը, յերիտասարդու-
թյանը կոմյերիտմիության մեջ ընդունելու գործն անբավարար է
կազմակերպված:

ՀամԿՅԵՄ-ի Կենտկոմի պլենումն առանձնապես անբավա-
րար է գտնում առաջավոր յերիտասարդությանը ՀամԿՅԵՄ-ի

շարքերն ընդունելու աշխատանքը կոմյերիտմիության Դոնեցի,
Սվեդլովսկի, Դնեպրոպետրովսկի, Ստալինգրադի ու Յարոսլավ-
լի մարզկոմներում և Ազրբեյջանի ԿՅԵՄ-ի Կենտկոմում:

Ուկրաինայի կոմյերիտմիության սկզբնական շատ կազմակեր-
պություններ բացահայտորեն անբավարար են աճում, իսկ նրանցից
ավելի քան հինգ հազար կազմակերպություն ամբողջ 1937 թվա-
կանի ընթացքում բոլորովին չի աճել: Դոնեցի մարզում Համ.
ԿՅԵՄ-ի 5314 սկզբնական կազմակերպություններից 1123 կազ-
մակերպություն վոչ մի մարզ չի ընդունել 1937 թվականին:
Դնեպրոպետրովսկի մարզի մի շարք խոշորագույն ձեռնարկու-
թյունների կոմյերիտական կազմակերպություններում՝ Որջոնի-
կիձեյի անվան «Չապորոժստալ» կոմբինատում, «Կոմունար»
գործարանում, «Պրավդայի» անվան վագոնային գործարանում,
Ջերմինսկու անվան հանքերում և այլն, կոմյերիտականների թիվը
մինչև վերջին ժամանակներս սիստեմատիկաբար նվազել է:

Կոմյերիտմիության Սվեդլովսկյան մարզային կազմակերպու-
թյան մեջ ամբողջ 1937 թվականի ընթացքում ընդունվել է միայն
17508 հոգի: Նովի Տադիլի մետաղաձուլական գործարանում ա-
ռաջավոր յերիտասարդությանը կոմյերիտմիության մեջ անբա-
վարար ընդունելու պատճառով 2233 յերիտասարդներից կոմյե-
րիտմիության մեջ է միայն 334 հոգի: Նազեթգինսկի մետա-
ղաձուլական գործարանում կա 2538 յերիտասարդ, իսկ կոմյե-
րիտական՝ 402 հոգի: Դեխոյարսկի պղնձահանքերում կա 4550
յերիտասարդ, իսկ կոմյերիտական՝ միայն 154:

Յարոսլավլի մարզային կազմակերպության մեջ ամբողջ
1937 թվականի ընթացքում կոմյերիտմիության մեջ ընդունվել
է միայն 13402 հոգի: Մինչդեռ մարզում գոյություն ունի 7787
կոլանտեսություն, նրանց մեջ կա ընդամենը ՀամԿՅԵՄ-ի
767 սկզբնական կազմակերպություն, կոմյերիտական կոլանտե-
սականների թիվը հասնում է միայն 9657 հոգու:

Լենինգրադի մեքենաշինական և մետաղաձուլման արդյու-
նաբերության սկզբնական կազմակերպություններն ամբողջ 1937
թվականին կոմյերիտմիության մեջ ընդունել են 4300 հոգի. կա-
րի, արիկոտածի, տեքստիլ և կոշիկեղենի արդյունաբերության
սկզբնական կազմակերպությունները կոմյերիտմիության մեջ
ընդունել են միայն 1449 հոգի: Լենինգրադում յերիտասարդու-
թյանը կոմյերիտմիության մեջ ընդունելու գործում ամենից ա-
վելի հետ մնացած ուսյունական կազմակերպություններն են՝ Կի-

բովյան ուսյունը, վորտեղ ամբողջ 1937 թվականի ընթացքում կոմյերիտմիության մեջ ընդունվել է 1274 հոգի, և վորտեղ արևու-
ուսյունը, վորտեղ նույն ժամանակամիջոցում ՀամԿՅՅՄ-ի շար-
քերն են ընդունվել ընդամենը 1185 հոգի:

Առաջավոր յերիտասարդությանը ՀամԿՅՅՄ-ի շարքերն ըն-
դունելու գործը դեռ մինչև այժմ էլ անբավարար հիմքի վրա
յե դբված նաև Մոսկվայի քաղաքային կազմակերպության մեջ:
Մոսկվայի Ստալինյան ուսյունում ամբողջ 1937 թվականին կոմ-
յերիտմիության մեջ ընդունվել է ընդամենը 1440 հոգի: Ռայոն-
նի 165 սկզբնական կազմակերպություններից 45 կազմակերպու-
թյուն բոլորովին չեն աճել: Ելեկտրոկոմբինատում տարվա ըն-
թացքում կոմյերիտմիության մեջ ընդունվել է ընդամենը 169
հոգի: Կոմյերիտմիության Մայրամեկյան ուսյունի կազմակերպու-
թյան մեջ ամբողջ 1937 թվականի ընթացքում ՀամԿՅՅՄ-ի
շարքերն է ընդունվել միայն 1169 հոգի: Ռայոնի 134 սկզբնա-
կան կազմակերպություններից 36 կազմակերպություն տարվա
ընթացքում վոչ մի մարդ չեն ընդունել: «Սերպ ի մոլոտ» գոր-
ծարանում, վորտեղ կա 2600 յերիտասարդ, 1937 թվականի ըն-
թացքում ընդունվել է ընդամենը 89 յերիտասարդ:

Ստալինգրադի մարզի մետաղաձուլական արդյունաբերության
27 սկզբնական կազմակերպություններում 1937 թվականի ընթաց-
քում ընդունվել է 318 հոգի, իսկ մեքենաչինական արդյունաբե-
րության 77 սկզբնական կազմակերպություններում նույն ժա-
մանակամիջոցին ընդունվել է 781 հոգի:

ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմի պլենումը միանգամայն տնրավա-
րար է գտնում աճումը կին-յերիտասարդությունից Թուրքմե-
նըստանի, Տաջիկստանի, Որենբուրգի և վորոնեժի կազմակեր-
պություններում, վորտեղ կոմյերիտմիության մեջ ընդունվողնե-
րի թվում կին-յերիտասարդությունը կազմում է ընդամենը
15—20 տոկոս:

Կոմյերիտմիության կոմիտեները պատշաճ ուշադրություն չեն
նվիրում ուսանող յերիտասարդության ընդունմանը ՀամԿՅՅՄ-ի
շարքերը: այդ պատճառով Կազան քաղաքի բոլոր բուհերում
ամբողջ 1937 թվականի ընթացքում ուսանող յերիտասարդությու-
նից կոմյերիտմիության մեջ ընդունվել է ընդամենը 195 հոգի:
Նույն ժամանակամիջոցին Սարատով քաղաքի 14 բուհերում
կոմյերիտմիության մեջ ընդունվել է միայն 309 հոգի, իսկ Իվա-

նովոյի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություննե-
րում՝ ընդամենը 81 հոգի:

Թույլ է կատարվում ՀամԿՅՅՄ-ի 10-րդ համագումարի
գերեկախվը կոլտեստություններում նոր սկզբնական կազմակեր-
պություններ կազմակերպելու մասին: Բելուոսիայում մինչև այժմ
սկզբնական կազմակերպություններ ունի կոլտեստությունների
միայն 30 տոկոսը: Որյոյի մարզում՝ 26 տոկոսը, Տուլայի մար-
զում՝ 23 տոկոսը, վորոգդայի մարզում՝ 19 տոկոսը, Մամոնեցկի
մարզում՝ 15 տոկոսը, Մոսկվայի մարզում 14 տոկոսը, Կիրովի
մարզում՝ 10 տոկոսը, Կալինինոյի մարզում՝ 10 տոկոսը:

II

Բայց ինչո՞վ կարելի յե բացատրել կոմյերիտական կազմա-
կերպությունների անբավարար աշխատանքը՝ յերիտասարդու-
թյանը ՀամԿՅՅՄ-ի շարքերն ընդունելու ուղղությամբ:

ՀամԿՅՅՄ-ի անբավարար աճման կարևորագույն պատճառն
այն է, վոր կոմյերիտական շատ աշխատողներ չեն հասկանում
յենինյան կոմյերիտմիության բնույթն ու ելությունը, վորպես
մասսայական կազմակերպության, անկուսակցական կազմակեր-
պության, վորը կամակրում է ՀամԿ(բ)Կ-ի ծրագրին և իր առ-
ջև նպատակ է դնում՝ դաստիարակել քաղաքի և դյուղի ամ-
բողջ աշխատավոր յերիտասարդությանը կոմունիզմի վողով:
Այդ աշխատողները կարծում են, թե կոմյերիտմիությունն իր
շարքերն է ընդունում արդեն պատրաստի, քաղաքականապես
գրագետ, դաստիարակված մարդկանց:

Ուստի պատահական չէ, վոր ՀամԿՅՅՄ-ի շարքերը մտնող-
ներին հաճախ ներկայացնում են նույնպիսի պահանջներ ու նոր-
մաներ, վորպիսիք ներկայացվում են ՀամԿ(բ)Կ-ի շարքերը
մտնողներին: ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմի պլենումը դատապարտում
է կոմյերիտմիության կազմակերպություններում լայն տարած-
ված այն պրակտիկան, ըստ վորի ՀամԿՅՅՄ-ի շարքերը մտնող-
ների համար քաղաքական քննություններ են սարքում, վորոնց
միտասկարության մասին քանիցս նախազուլացրել է Համ-
ԿՅՅՄ-ի Կենտկոմը:

Մոսկվա քաղաքի Սվերդլովյան ուսյունի № 167 դպրոցում
կոմյերիտմիության կոմիտեն ընկ. Թադանովային կոմյերիտմիու-
թյան մեջ չի ընդունել միայն այն հիման վրա, վոր նա չի պա-
տասխանել քաղաքական այն 17 հարցերից մեկին, վորոնք տրվել

են նրան՝ ՀամԿՅՅՄ-ի շարքերը նրան ընդունելու հարցը քննվելիս:

Գրոզնի քաղաքի յերկրորդ նախաթոր գործարանում կոմյե-րիսամիության մեջ չեն ընդունել ստախանովական ընկ. Գուսեվին, վորն արտադրական նորման կատարում է 300 տոկոսով, և ստա-խանովական ընկ. Դեդենկոյին, վորը նորման կատարում է 200 տոկոսով, միայն այն հիման վրա, վոր նրանք չեն կարողա-ցել պատասխանել նրանց տրված միջանի քաղաքական հար-ցերին:

Քիչ փաստեր չկան, յերբ կոմյերիտմիության միջանի կո-միտեների ղեկավար աշխատողները ՀամԿՅՅՄ-ի շարքերն ըն-դունելու ժամանակ ընդունվողները համար զանազան «թակարդ-ներ» են սարքում, խարզավանական հարցեր տալով նրանց, այն է՝ «Վերջերս ի՞նչ կատարվեց Հայիտի կողմում»․ «Վորտե՞ղ, վո՞ր փողոցում, ամսի վո՞ր թվին, վո՞ր տանը հայտարարվեցին Դե-լյա-Ռոկի ղեկները»․ «Վո՞ր թվականին և ամսաթվին ծնունդ ա-ռավ բանվոր դասակարգը» և այլն:

Յերիտասարդությանը կոմյերիտմիության մեջ ընդունելու գործին ցուցարերվող այդպիսի քյալլազյոզական մոտեցումը վանում է յերիտասարդությանը և փակում է դուռը նրանց առաջ, ովքեր ցանկանում են մտնել լենինյան կոմյերիտմիութ-յան շարքերը:

Կոմյերիտմիության միջանի կոմիտեներ իրենց գործողու-թյուններով ուղղակի դժվարացնում են յերիտասարդության հա-մար՝ ՀամԿՅՅՄ-ի շարքերը մտնելու գործը: Այդ կոմիտեները, խախտելով կոմյերիտմիության կանոնադրությունը և Համ-ԿՅՅՄ-ի Կենտկոմի գոյություն ունեցող վորոշումները, Համ-ԿՅՅՄ-ի շարքերն ընդունելու համար սահմանում են զանազան ավելորդ ինստանցիաներ, այն է՝ խմբակ, ցեխային կազմակեր-պության բյուրո, կոմյերիտական ցեխային ընդհանուր ժողով և այլն:

Կոմյերիտմիության շատ աշխատողներ յերիտասարդությանը ՀամԿՅՅՄ-ի շարքերն ընդունելը յերկրորդական, վոչ-կարե-վոր, «աշխատանքից» չեղող գործ են համարում: Միջանի մարդ-կոմների և շրջկոմների քարտուղարներ յերիտասարդությանը կոմյերիտմիության մեջ ընդունելու գործը ղեկավարում են «ընդ-հանուր առմամբ» և «հիմնականում»:

Մինչև այժմ ել չի վերացել ՀամԿՅՅՄ-ի շարքերն ընդունե-

լու ժամանակ ցուցարերվող քաշքուղի: Գորկի քաղաքի Լենի-նյան ռալոնում միջանի ամիս շարունակ չքննված է մնացել Համ-ԿՅՅՄ-ի շարքերը մտնելու համար տրված 200 դիմում, Տամ-բովի քաղկոմում՝ 66 դիմում, վորոնցից 56 դիմում տրված է յեղել 1937 թվականին:

Ղեկավարման գրասենյակային-բյուրոկրատական մեթոդների ցայտուն որինակ են հանդիսանում այն բազմաթիվ փաստերը, յերբ կոմյերիտմիության շատ շրջկոմներ միջանի փոքրաթիվ սկզբնական կազմակերպություններ միավորում (թիփավորում), մի կազմակերպություն են դարձնում, փոխանակ բարելավելու յերիտասարդությանը կոմյերիտմիության մեջ ընդունելու աշխա-տանքը:

Առաջավոր յերիտասարդությանը կոմյերիտմիության մեջ անբավարար չափով ընդունելն ուղղակի հետևանք է նաև այն բանի, վոր ՀամԿՅՅՄ-ի կոմիտեների կազմակերպական-քաղա-քական աշխատանքը հետ է մնում յերիտասարդության հարա-ձուռն պահանջներին: Սկզբնական շատ կազմակերպություններ մեկուսացվում են արտամիութենական յերիտասարդությունից, քաղաքական աշխատանք չեն կատարում նրանց մեջ, զանազան ժողովներ, դասախոսություններ և գրույցներ չեն կազմակեր-պում նրանց համար:

Այս բոլոր թերություններն ու խեղաթյուրումները, վորոնք թույլ են տալիս կոմյերիտական աշխատողները յերիտասարդու-թյանը ՀամԿՅՅՄ-ի շարքերն ընդունելու գործում, ոգտադոր-ծեցին Փաշիգմի տրոցկիստական-բուխարինական գործակալները, վորոնք թափանցել եյին կոմյերիտական ղեկավար որգանների մեջ և վիժեցնում եյին ՀամԿՅՅՄ-ի աճումը:

ՀամԿՅՅՄ-ի Կենտկոմի պլենումը վորոշում է՝

1. Դատապարտել, վորպես յերիտասարդության կոմունիս-տական դաստիարակման գործի համար վնասակար, կոմյերիտա-կան ակտիվի մեջ գոյություն ունեցող ձգտումը՝ սահմանափա-կել խորհրդային առաջավոր յերիտասարդության ընդունումը կոմյերիտմիության մեջ:

Կոմյերիտական կազմակերպությունները, ՀամԿՅՅՄ-ի շար-քերն ընդունելիս, պետք է յեղեն նրանից, վոր կոմյերիտմիութ-յունը հանդիսանում է խորհրդային առաջավոր յերիտասար-դության մասսայական անկուսակցական կազմակերպությունը և իր առջև նպատակ է դնում՝ դաստիարակել քաղաքի և գյուղի

ամբողջ աշխատավոր յերիտասարդությունը կոմունիզմի վո-
զով:

2. Արդեւել յերիտասարդությանը կոմյերիտմիութեան մեջ
ընդունելիս քաղաքական վորեւե քննություն կատարել, խստիվ
դեկլարավելուով ՀամԼԿՅՅՄ-ի կանոնադրութեամբ, վոր կոմյե-
րիտմիութեան անդամ ե ընդունվում անհատական կարգով ա-
ռաջավոր, խորհրդային իշխանութեանը նվիրված, ՀամԼԿՅՅՄ-ի
ծրագրերն ու կանոնադրութեանն ընդունող յերիտասարդությու-
նը բանվորների, գյուղացիների և ծառայողների միջից:

3. Մահմանել, վոր սկզբնական բոլոր կազմակերպություն-
ներում, վորտեղ կան ցեխային և նրանց հավասարեցված կազ-
մակերպություններ, կոմյերիտմիութեան մեջ մտնելու դիմումնե-
րը քննվում են ցեխային կոմյերիտական ժողովներում, ապա
սկզբնական կազմակերպութեան կոմիտեյում, վորից հետո ու-
զարկվում են ՀամԼԿՅՅՄ-ի շրջկոմին, քաղկոմին (վորտեղ կոմ-
յերիտմիութեան շրջկոմ չկա)՝ հաստատելու համար:

4. Վերացնել դոյություն ունեցող այն կարգը, վորի համա-
ձայն սկզբնական կազմակերպություն չունեցող կոլանտեսու-
թյուններ, ձեռնարկությունների և հիմնարկների յերիտասար-
դությունից ՀամԼԿՅՅՄ-ի շարքերը մտնելու համար տրված դի-
մումները քննվում են կոմյերիտմիութեան վորեւե մոտակա
սկզբնական կազմակերպութեան մեջ:

Մահմանել, վոր կոմյերիտմիութեան մեջ մտնելու համար
յերիտասարդութեան տված դիմումները, այնտեղ, վորտեղ
սկզբնական կազմակերպություններ չկան, քննվում են անմիջա-
կանորեն ՀամԼԿՅՅՄ-ի շրջկոմում կամ քաղկոմում (վորտեղ
կոմյերիտմիութեան շրջկոմ չկա):

5. Պլենումը միանգամայն սխալ ե համարում, յերբ կոմյե-
րիտմիութեան կոմիտեները շատ հաճախ իրենք իրենց են թողնում
կոմյերիտմիութեան մեջ նոր ընդունվածներին, չեն աշխատում
նրանց հետ, մի բան, վոր յերիտասարդ կոմյերիտականների հա-
մար դժվարացնում ե կոմյերիտական կազմակերպութեան մեջ
կատարվող ախտիվ աշխատանքին արագորեն հաղորդակից լինե-
լը, իսկ յերբեմն ել ունենում ե այն հետեանքը, վոր այդ կոմ-
յերիտականները կարվում են կազմակերպությունից:

Բոլոր կազմակերպությունների առջև դնել, վորպես կարե-
վորագույն խնդիր՝ ՀամԼԿՅՅՄ-ի շարքերը նոր ընդունվածների

ամենաարագ ներգրավումը հասարակական-քաղաքական զանա-
զան աշխատանքներում:

6. Հանձնարարել ՀամԼԿՅՅՄ-ի Կենտկոմի Բյուրոյին՝ սիս-
տեմատիկաբար ստուգել ՀամԼԿՅՅՄ-ի Կենտկոմի պլենումի սույն
վորջման կատարումը կոմյերիտմիութեան մարզկոմներին, յեր-
կըրկոմներին և ազգային հանրապետությունների ԼԿՅՅՄ-ի կենտ-
կոմներին կողմից:

Առաջարկել կոմյերիտմիութեան բոլոր մարզկոմներին, յեր-
կըրկոմներին և ազգային հանրապետությունների ԼԿՅՅՄ-ի կենտ-
կոմներին՝ կանոնավոր կերպով լսել կոմյերիտմիութեան շրջա-
նային կոմիտեների և սկզբնական կազմակերպությունների հա-
վետվություններն՝ առաջավոր յերիտասարդութեանը լենինյան
կոմյերիտմիութեան շարքերն ընդունելու ուղղութեամբ նրանց
կատարած աշխատանքի մասին:

ՀամԼԿՅՆՄ-ի Կենտկոմի IV պլենումի վերջումն ընկ. Կոսարե-
վի ղեկուցման առթիվ՝ կոմյերիտմիության մեջ ժողո-
վրդի թշնամիների կատարած աշխատանքի մասին. 5

Լենինյան կոմյերիտմիությունը կուսակցության հավատարիմ
ոգնականն է 14

ՀամԼԿՅՆՄ Կենտկոմի V պլենումի վերջումները . . . 19—53

Մանուցում 21

ՀամԼԿՅՆՄ-ի ԿԿ-ի պլենումի վերջումները Ազրբեջանի, Ղա-
ղախստանի և Ուզբեկստանի կոմյերիտմիության ԿԿ-նե-
րի ղեկուցումների վերաբերյալ. 23

ՀամԼԿՅՆՄ-ի Կենտկոմի պլենումի վերջումը կոմյերիտմիու-
թյունից վտարումներ կատարելիս կոմյերիտական կազ-
մակերպությունների կատարած սխալների, Համ.
ԼԿՅՆՄ-ից վտարվածների բողոքների նկատմամբ ցույց
արված ձեռնարկային-բյուրոկրատական վերաբերմունքի և
այդ թերությունները վերացնելու միջոցների մասին. . . 33

ՀամԼԿՅՆՄ-ի Կենտկոմի պլենումի վերջումը յերիտասար-
դուցթյանը կոմյերիտմիության մեջ ընդունելու գործի
թերությունները վերացնելու մասին 46



Քարզմ. Սյ. Այվազյան
Խմբագրեր Ս. Մխչաթյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Իլավիտի լիազոր № 3324, հրատ. № 605,

Պատվեր № 130, տիրաժ 5.000

Հանձնվել է արտադրության 27/VIII 1938 թ.

Մատրագրվել է ապագրելու 1/X 1938 թ.

Դիմել 50 է.

Պետհրատ—Վաղարշական գրահանույթյան հրատարակչության տպարան
Ցեքևան, Ալավերդյան № 65



489

38-к
а 1955

ԳԻՆԸ 50 Կ.

807

1421

8071

ПОСТАНОВЛЕНИЯ
ЧЕТВЕРТОГО И ПЯТОГО ПЛЕНУМОВ
ЦК ВЛКСМ

Аргиз—Издательство полит. литературы
Ереван, 1938